

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ

Հ Ա Խ Ա Տ Ք

Ե Խ Ա Խ Թ Ե Ր *

Ե. Լալայեանի

Լ Ե Բ Ի Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Բալէտ լեռը, որ բարձրանում է նորդուզի և Խոշապի սահմանում, պաշտում է թէ Հայիրից և թէ քրդերից։ Սրա գագաթին կայ մի դոլմէն, որին ժողովուրդը օրօրոց է կոչում։ Սա մօտ 7 մետր երկարութեան, 4 մետր լայնութեան և 2 մետր թանձրութեան մի ահազին քար է, յանկած գետնից մօտ մի մետր բարձրութեան երկու մեծ քարի վրայ։ Ուխտաւորները, որ առաւելապէս հաւաքում են Համբարձման օրը, երեք անգամ անցնում են այս քարի տակից, որպէսզի իրանց ուխտը կատարուի։ Եւ որպէս զի գուշակեն, թէ իրենց ուխտը, իղձը, կատարուելու է, մատերը գնում են այս քարի վրայ և դիտում, եթէ քարը շարժուեց, նշան է, որ կատարուելու է։

Վարագ.՝ Մասնաւորապէս վանեցիների համար Վարագայ սարը շատ նոուիրական է, զրեթէ ամեն առաւօտ պառաւներն ու ծերունիները երեսու դէպի Վարագ դարձնելով ազօթում են։ Եալ շաղաթաթախ կանանչ կարմիր ազօթարան, որ ճողճուեր ես վէր Վարագայ պանձրիկ սարին, քե եմ ապակինե այլն, որ հաւանականօրէն մնացորդ է արևապաշտութեան և լեռնապաշտութեան։

* Տամնեութ տարիների ընթացքում միենայն ծրագրով նիւթեր հաւաքելով նաև հաւաքի մասին, ինձ մնում է նոյնը անել էլի միքանի գուտուների վերաբերմամբ, որից յետոյ պիտի ձեռնարկեմ բուն նպատակին՝ միացնել բոլոր հաւաքածն նիւթերը, լրացնել ուրիշների հաւաքածներով, որի համար և միքանի ընկերակիցների հետ կազմում ենք պարբերական բոլոր հրատապութիւնների գրախօսութիւնը, և կատարել ուսումնաբերութիւններ։

Վարագայ լերան Գալիլիա և Աստղկան բերդ կոչուած քարաժյուերի կատարները մինչև այժմ էլ պաշտաման ենթակայ են։ Աստղկան բերդը, որի նկարազրութիւնը արել եմ սշանաւոր վանքերի բաժնում, ամենայն հաւանականութեամբ Աստղկան նուիրուած մի մեհեան է եղել, իսկ Գալիլիան, որ արելեան ամենաբարձր կատարն է, այժմ համարում է այն սրբատեղին, ուր և Հռիփսիմէ կոյսը իւր պարանոցից կախած ենաց փայտը թաքցրել է։ Վասպուրականցիները հաւատում են, թէ ով մի օրում ծոմ պահելով կարողանայ քառասուն անգամ բարձրանալ այս սեպացած քարաժայոի գլուխը, նա կեանքի մէջ միշտ յաջողութիւն կունենայ։ Այս փորձն անողներից մինչ՝ Մալիաս անունով, ՅՅ-րդ անգամ բարձրանալիս վայր է գլուխուել և մեռել Այստեղ կայ մի խաչանիշ քար, փոքր ինչ լպրծուն և փայլուն։ այստեղ ուխտաւորները տաժանելի նեղութիւնով բարձրանում են և մոմ վառելուց յետ, իրենց հանգերձից փոքր ինչ կտրելով նրա ծակերի մէջ կոխում, և ապա մի խորհուրդ մտքումը զնելով՝ վերցնում են մի քար, և քսում այդ քարի կրծքին, եթէ կպաւ հաւատում են, որ իրենց մտադրած խորհուրդը քարի է, պիտի կատարուի, իսկ եթէ չկպաւ՝ նշան է, որ չի կատարուելու։

Սուլը Դէտ լեռն.՝ Հայոց Ձորի Հայկաբերդ ամրոցի հարաւային կողմը բարձրանում է մի լեռ, որ կոչւում է ս. Դէտ, և որի մասին պատմում է, իրը թէ զրա գագաթին է դրել Հայկ նահապետը թելի նետահար մարմինը՝ դիտելու։ Այս նուիրական լերան գագաթին այժմ մի փոքրիկ մատուռ կայ, ուր սովորաբար բարձրանում են կանայք՝ ձեռներին մի մի հում ձու բռնած, զգուշանալով հչ մի տեղ վայր չդնել և չխօսել։ Համսնելով վերոյիշեալ մատուռը, ձուերը զնում են սեղանի առջև, աղօթում են և ապա կրկին վերցնելով՝ իշնում լեռից, տանում տուն, եփում և ուտեցնում կապոյտ հազ կամ աքլորախեղդ հիւանդութիւնն ունեցող երեխաներին բժշկելու հաւատով։

Ծեհիտ կամ նահատակի լեռ.՝ Հայկի ու Բէլի պատերազմի աւանդութիւնը տարածուած է նաև տեղացի քիւրդերի մէջ, և սրանք նուիրական են համարում հչ թէ ս. Դէտ լեռը, այլ սրամօտ գտնուող միւս լեռը՝ որի վրայ ցուցադրուած է եղել շէհիտի կամ նահատակի դին։ Քըդերը այս լերան վրայ ոչխար չեն արածեցնում, որովհետեւ հաւատում են, թէ եթէ արածացնեն, ոչ խարները կը սատակին։

Փեստ լեռաւ Մոքս աւանի Դաշտ թաղի արևելեան կողմը բարձրացած Փոքր Պետ (պարսկերէն ապաստան) լերան գագաթին նկատելի է մի ամրոցի և մի մատրան հետք։ Ամեն տարի,

Ապրիլի 7-ին, Աւետեաց տօնի օրը, ամուլ կանայք գիշերանց ուխտ են գնում այդ լեռան գագաթը, և վերադառնում գիւղի եկեղեցին նախ քան «Փառք ի բարձրւնս» երգելը: Հնումը տղամարդիկ էլ էին գնում, բայց հչ գիշերանց այլ ցորեկին, սակայն այժմ միայն ամուլ կանայք են գնում որդի հայցելու:

Քաջակայան լեռ—Արճէշ գաւառի արևելեան կողմը գտնւում է մի բարձր լեռ, որ Քաջակայան կամ «Քաջաց կայան» է կոչում և նուրբական է համարւում հայերի համար:

Արտոս եւ Աղնոս.—Նոյ նահապետի տապանը երբ հասել է Արտոս լեռան, նոյը արտասուել է, ուստի և այս լեռը կոչուել է Արտոս, և երբ հասել է Շատափի լեռան, նոյը ասել է՝ Առ նոյս, ուստի և այս լեռն էլ կոչուել է Աղնոս:


Արտոս լեռան գագաթին, Ոստանի մօտ, կայ մի գերեզման, որ աւանդութիւնը վերագրում է Սիմէօն ճգնաւորին, որի խորհրդագով VII դարում Վարդպատրիկը կառուցել է 40 եկեղեցի: Սրանցից մինը համարւում է Աղթամարի կղզում եղած ս. Ստեփաննոսի եկեղեցին:

Գ Ա Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Լեզրի ժայռը.—Լեզր գիւղի մէջ բարձրանում է մի բարձր քարածայռ, որի գագաթին, աւանդութիւնն ասելով, Շամիրամ թագուհին դրել է Արայի դիակը, որպէսզի Յարակեղ աստուածները լիզեն և կենդանացնեն Այժմ այստեղ կանգնած է մի հասարակ մատուռ Ամենափրկիչ անունով, ուր ամեն տօն օր և մասնաւորապէս Աշխարհամատրան կիրակին ահազին բազմութիւն ուխտ է գալիս՝ ամենայն ցաւերից փրկութիւն հայցելու:

Այս քառածայռի հանդէպ բարձրանում է մի ուրիշ, միակտուր, փոքր ժայռ, որի գագաթին կան կանաչ բոյսեր, որոնք իրենց թարմութիւնը պահպանում են և ձմբան ժամանակ ու չեն չորանում: Աւանդութիւնն ասում է, թէ այս ժայռը տեսնելով, որ հազարաւոր մարդիկ բարձրանում են իւր մօտի մեծ ժայռը, աղօթելու՝ նախանձում է նրա փառքին և սկսում է ինքն էլ բարձրանալ, որպէսզի կարողանայ նրան հաւասարիլ, նոյն փառքին արժանանալ: Մի քիչ բարձրանալուց յետ խրոխտացել է թէ ահա ես օր ըստ օրէ բարձրանում եմ մինչեւ որ հաւասարիմ քեզ և մի քիչ էլ անցնիմ: Բայց երբ բարձրանում է, հաւասարւում և նոյն իսկ անցնում Ամենափրկիչի լեռից, վերջինս յանկարծ սաստիկ բարձրանում է և ձեռքով խփում հակառակորդի

գլխին, որ խսկոյն ցածրանում է և իւր նախկին դրութիւնն ստանում։ Ահա այս Ամենափրկչի ժայռի ձեռքի տեղն է՝ որ ամառ ձմեռ միշտ կանաչ է մնում։



Լեզու.

Ամուսին պարզեւող առուկի ժայռը.—Վանայ բերդի հիւսիսային կողմը, մի ահազին ժայռի մէջ, երկու կամարակապ բացուածքներ կան, 1,75 մետր խորութեան, 2,50 մետր լայնութեան

և Յ մետր բարձրութեան։ Սըանցից առաջնի մէջ երկաթագրով զըուած է՝

Ց Ղ. Ը

†

ԶԳՈՒՐԳՔԵՆ ՑԻՇԵՑԷՐՔ Ի ՏԵՐ։

Միւսի մէջ կայ սեպածն արձանագրութիւն։

Հայ և թուրք կանաք գալիս են այստեղ ուխտ, և բամբակի կտոր, մի որևէ ցնցոտի հպում սրա պատերին, եթէ կպչում է՝ նշան է, որ նրանց ուխտը կատարուելու է։

Այս կամարածն բացուածքների առջև, միայն փոքր ինչ ցածրից, նոյնպէս ժայռի մէջ փորուած է մի առու, որ $\frac{1}{2}$, մետր լայնութիւն, նոյնքան խորութիւն և 20 մետր երկարութիւն ունի։

Աւանդաբար պատում են, թէ այդ երկու կամարակապ բացուածքները մի ժամանակ մեհեան լն եղած, և դրանց առջև մարդկային զոհեր են տեղի ունեցել, որոնց արիւնն այդ առուով թափուել է ժայռից ներքեւ։

Այժմ ամուսնանալու փափագ ունեցող աղջկները, թէ հայ և թէ թուրք, այդ կամարակապ բացուածքների մէջ աղօթելոց յետ նստում են այս առուի մէջ և վայր սահում, յուսալով այսպիսով համելու իրենց մուրազին։ Այսպէս սահելուց առուի ներքին երեսը բաւական յղկուել է։

Աղջղն։—Կտորց անապատի Դրսի տան մօտ, բլրակների շարքի գագաթներից մինում կայ արհեստական երկու բարայր միմեանց վրայ, որոնք հաղորդակցուում են միմեանց հետ մի անցքով։ Այս բարայրերը կոլում են Արեգին, և սրբատեղի են համարում։ Ամուլ, ինչպէս և սանճու ունեցող, կանաք գալիս են այստեղ ուխտ, մոմ վառում, խունկ ծխում և 7 անգամ անցնում այս բարայրերի անցքով, հայցելով զաւակ ունենալ և կամ ազատուել սանճու ցաւից։ Բարայրերի մօտ կան մի աւազան և մի քանի ծառեր, որ նոյնպէս սուրբ են համարում։

Ակորու խարս ու փեսի քար։—Վանի Այգեստան կոչուած արուարձանի հիւսիսային կողմը երկու ցից ապառաժներ կան, որոնց մասին պատմում են հետևեալներ։

Ա. Շամիրամ թագուհու ժամանակ Գայլ գետը Շամիրամի բերդի արևմտեան ստորոտում մի նեղիկ ծակ բաց անելով դուրս է հոսել և ողողել անհամար սներ։ Անմիջապէս իմացրել են Շամիրամ թագուհոն, որ իսկոյն թոել է իւր ամառանոցից, անցել ահարկու վեհեր, հասել Արտոս լերան, իւր ոսկեթել մազերից ու լորել է պարսէտ և մի քանի մեծ ժայռեր նետել է Գայլ գետի

բերանը, մինչև բերդի ստորոտը, ապա եկել է այդտեղ իւր Նազ-նազ աղջկայ հետ, հազար հակ բամբակ խրել ջրի բերանը և աղջկայ օգնութեամբ այդ ահազին ժայռերը շարել այդ բամբակի վրայ, մի դղեակ շինել ու մէջը բնակուել, որպէսզի այսպիսով


ահաբեկուած ժողովուրդը վտանգից ապահովուի: Այս ժայռերից մինն այժմ «Ծրտոտ քար» է կոչւմ:

Պատմում են նաև, որ Կարդոս անունով մի քրմապետի որդի, հրապուրել է Նազլու, Շուշան և Նարկիզ անունով աղջիկներին, որոնցից իւրաքանչիւրին յաջորդաբար մըշտնջնական սէր խուտանալուց յետ՝ դաւաճանել է, և այս երեքը յուսախափ թափառելիս պատահենով իրար՝ պատմեն են միմանց իրենց ցաւերն

Ակուրու խարս ու փեսի քար

ու վշտերը և յուսահատ բարձրացել են այս Ծրտոտ քարի գլուխը և ձեռք ձեռքի տուած վայր են զլորուել, և ուր որ թափուել է նրանց արեան շիթերը, այնտեղ անթառամ ծաղկի պուրակներ են բոււել:

Այս ամէնը լսել են Կարդոսը և նրա հայրը, և միանգամայն անկարեկիր մնացել, Կարճ միջոցից յետոյ Կարդոսը պատահել է մի ուրիշ աղջկայ, դեռատի Մանիշակին, որ լիսվին նուիրուած է եղել իրանց տան հօտաղ Կարօին: Կարդոս իւր հօր, քրմապետի և համախօների միջոցով դրաւել է Մանուշակին և առեանգել, խոստանալով ամուսնանալ հետը: Բայց երբ իւր հօր, քրմապետի և հարանկորների հետ, առաւօտ շատ վաղ, դեռ արեը չըծագած եկել են Ակուրու մօտ գտնուող մեհեանը պահկուելու, յանկարծ ծագում է արեը, սև ամպերը ծածկում են այս լեռը, երկինքը փայլատակում է, լսում են զոր որոտումներ և մի լուսեղէն էակ, շրջապատուած երեք տժգոյն, կիսամերկ և զայրացկոտ նաժիշտ-



ներով, երևում է ամպերի միջից լեռնակի գագաթը և որոտում. «Քարացեզք, խարողներ, և դուք, խարողի մեղսակիցներ»:

Եւ անմիջապէս՝ հարսն ու փեսան, քուրմն ու հարսներոները բարէ արձան են կարում *):

Բ. Մի այլ աւանդութիւն ասում է, թէ մի երիտասարդ և մի աղջիկ իրենց ծնողների կամքին հակառակ արեածագից առաջ եկել են այստեղ գտնուած մեհեանը պսակուելու, և երբ մեհեանից դորս են եկել, արևը ծագել է և սրանք քարացել են իրենց հարսներոներով ու բռումով:

Այս «Խարս-փեսի» քարերին շատերը բախտափորձ քարեր են կացնում, այսինքն՝ մտքերում մի խորհուրդ դնելով վերցնում են մի փոքրիկ քար և քսում այս ժայռի կրծքին, և բաց թողնում, եթէ կպչում էն նշան է, որ այդ խորհուրդը բարի է, կատարուելու է, իսկ եթէ չի կպչում, վայր է ընկնում չար է, չի կատարուելու:

Միենոյն նպատակով քար են ձգում. այս Խարս ու փեսի ժայռերի վրայ, 3—4 մետր բարձրութեան գտնուած փոքրիկ խոռոչների մէջ: Եթէ 1—3 անգամ ձգելիս յաջողացնում են բռն խոռոչի մէջ ձգել, հաւատում են, որ իրենց մտքի մէջ պահած խորհուրդը կատարուելու է:

Այս «Խարս-փեսայշ»-ի մօտ մի ուրիշ բարձրութեան վրայ կայ և Աստուածածնի անունով մի մատուռ, ուր ուխտ են գալիս վանեցի առաւելապէս կանայք: Սրանք մատուռի մէջ աղօթելուց յետոյ, վերցնում են նրա հողից, շաղախում և քսում ձեռներին ու երեսին, և գնում մօտակայ գետակի մէջ լուացում, յուսալով, որ այսպիսով ազատուելու են իրենց վերքերից ու ցաւըրից:

Ծամ-քար.—Արտամէտ գիւղի մօտ ընկած է մի ահագին քար, որ կոչւում է Շամ-քար և որի մասին պատմում են հետեւելալները.

Ա. Շամիրամ տղամարդի շորեր հագած թագաւորութիւն է արել և շարունակ վանի կողմերից էլ աղջիկներ է տարել իւր համար, և իրը, առագաստի երկրորդ օրը սրանց սպանել է տուել, որպէսզի իւր աղջիկ լինելը չյայտնուի: Մի անգամ էլ մի քոսա տղայ, կամենալով վրէժմնդիր լինել այնքան աղջիկների մահուան, աղջկայ շորեր է հագնում և այնպիսի միջոցների է դիմում, որ նրան ևս Շամիրամի պալատոն են տանում: Այստեղ նա նկատում

*.) Քաղուած է «Շաղիկ» հանդիսի 1895 թ. № 10-ի «Քարացածները» աւանդապէպից:

է, որ Շամիրամը աղջիկ է եղել և ոչ տղայ, և պալատից գուրս փախչելով քղաւել է՝ «Շամիրամը աղջիկ է, Շամիրամը աղջիկ է»: Շամիրամը սաստիկ բարկանալով, ընկել է նրա հետեւից և իւր քառասուն հուսակ մազերը ձգելով մի մեծ քարի՝ շպրտել է նրա հետեւից, և որովհետև սաստիկ բարկացած է եղել՝ փոխանակ «վըր քոսին» ասելու, «մէջ փոսին» է ասել, ուստի և այդ քարը զնացել ընկել է Արտամիտու փոսի, ձորի, մէջ:

Բ. Շամիրամը համանուն առուն փորել տալիս ճանապարհի



Շամիրամի ժամ քարը

Վրայ մի մեծ քար է պատահել, իւր քառասուն ծամը երկուսի բաժանելով բոնել է այդ քարը և ձգել Արտամէտի մօտ: Դեռ մինչև այժմ էլ այդ քարի վրայ նկատելի են Շամիրամի ծամերի նշանները:

Արծուաքար.—Մոքս գիւղաքաղաքի հարաւային կողմը մի քարձր ժայռ կայ, որ կոչւում է Արծուաքար: Սրա մէջ բացւում է մի քարայր, ուր ապրում են հրեղէն հիւրի-փէրիներ: Սրանք տարին միայն մի անգամ՝ համբարձման գիշերը՝ դուրս են գալիս այս քարայրից և պարում են խոտերի նուրբ ծայրերի և ծառերի քարակ ճիւղերի վրայ: Այս քարայրի մէջ կայ նաև մի ոսկէ օրորոց և շատ գանձեր ու հարստութիւն:

Շեղջայ դար.—Վանի հիւսիսային կողմը, Դոլաշէն գիւղից փոքր ինչ հեռու գանւում է մի բլուր, որ կոչւում է Շեղջադար: Սրա շուրջը նկատում է մարդկանց և մի, գոմէշներ լծած սայլի նմանութիւն բերող, քարեր: Աւանդութիւնն ասում է, թէ այս բլուրը մի ժամանակ ցորենի շեղջ է եղել, որի տէրը, չափազանց ժլատ լինելով, ոչ միայն ոչոքի ողորմութիւն չէ տուել, այլ

երկնքի թռչուններին էլ արգելել է, որ մի քանի հատիկ կտցահարեն, այս պատճառով և Աստուած բարկացել է նրա վրայ, և նրան, նրա սայդն էլ իւր գոմէշներով, ինչպէս և ցորնի շեղը քար է դարձրել:

Այնակայ տէզ.—Վարագայ լերան հիւսիսային կողմը, Կողբանց գիւղի մօտ, կայ քարակառականների մի ամբողջ խումբ, որոնց մէջ ուշագրաւ է մի ցից քար, Վերջինս կոչում է Այնակայ (թերևս Առնակ աստծու) տէզ: Քարերից մինը, որ մարդու նմանութիւն է տալիս, կոչում է Այնակայ հովիս, մի ուրիշ քար՝ Այնակայ շուն, ուրիշներ՝ Այնակայ ոչխարներ: Այս քարերի մօտ կայ մի սուրբ ծառ և մի սուրբ աղբիւր:

Օծքարելուր.—Արձէշի արևելեան սահմանի վրայ գտնուում է մի քարարլուր, որի ծերպերի մէջ տեսնուում են բաղմաթիւ քարաթօթօշներ և օձեր, խուրձ խուրձ միմեանց փաթաթուած: Տեղացիներն այս քարարլուրը սուրբ և այս քարաթօթօշներն ու օձերը այստեղի հին, հարուստ բնակչութեան Շտան դէովլէթներն են համարում:

Անգամայ ս. քարը.—Անգամայ վանքի պարտիզի մէջ մի սև քար կայ, մօտն էլ մի աղբիւր: Ջերմ ունեցողները գալիս են լուացում այդ ջրով, քարի առաջ մում վառում, յաճախ մօտը քնում, յուսալով բժշկուել:

Մողերի քարը.—Մոքսի Ամենափրկիչ վանքի մօտ, անտառի մէջ, կայ մի մետրաչափ քառակուսի քար, որի հիւսիսային կողմի վրայ նկատելի են երեք փոքր ինչ ներս ընկած տեղեր: Աւանդութիւնն ասում է, թէ Մելքոն, Գասպար և Բաղդասար մողերը այստեղ կոթնել, հանգստացել են, որից և յառաջացել են այդ փոխիկները: Այժմ մէջքացաւ ունեցողներն այստեղ ուխտ են գալիս:

Ս. Թաղէոս առաքեալի ըեւեռու.—Թիմարի Ատէր գիւղի վերև, գեպի հարաւ, մի մեծ քար կայ, որի վրայ մի մեծ բնեռ է մեխուած: Պատմում է, թէ Թաղէոս առաքեալն է այդ բնեռը մեխել, ըստ իւր սովորութեան, իւր անցած ճանապարհը՝ յայտնի կացուցանելու նպատակով: Շատեր ուխտ են գնում այդտեղ:

Հովուի քար.—Վերին Խոշապի Պահանց գիւղի մօտ, Պաշեթայ լերան լանջին, կան մի հովուի և մի քանի ոչխարների նմանութիւն բերող քարեր, որոնց մասին աւանդաբար պատմում են, թէ մի ճգնաւոր այս տեղով անցնելիս տեսել է մի հովիւ իւր ոչխարներն արածացնելիս և մի քիչ կաթ խնդրել, սակայն հովիւը մերժել է, այս պատճառով էլ ճգնաւորը սրան անիծել է և սա իւր ոչխարների հետ քար է դարձել:

Հովովի քար.—Առնոս լերան լանջին, Սոքան և Մափանց գիւղերի միջն կան ոչխարների, գառների և մի հովովի նմանութիւն ունեցող քարեր, որոնց մասին ժողովրդական աւանդութիւնն ասում է, թէ սրանք մի ժամանակ կենդանի են եղել, մի գայլ ընկել է ոչխարների մէջ և սկսել կոտորել. հովիւը ազաշել է Առնոս լերան գագաթին գտնուող ս. Աստուածածնի վանքին, որ հեռացնէ գայլին, խոստանալով մի ոչխար մատղել. սակայն երբ գայլը հեռացել է, սա ծոցից բռնել է մի ոջիլ և ջարդելով ասել. «Էս քու մատղդ, Աստուածածին», և անմիջապէս իւր ոչխարների և գառների հետ քար կտրել.

Հայկայ-թերդի ժայռը.—Հայկայ թերդի գագաթին մի փոքրիկ ապառաժ կայ, որ սուրբ է համարում. առաւելապէս այնպիսի կանայք, որոնք «թըլըլդ» ունենալով, կամ մեռած երեխաներ են ծնում և կամ սրանք ծնուելուց յետ երկար չեն ապրում, գալիս են այստեղ ուխտ՝ բժշկութիւն հայցելու:

Այսպիսի կանայք իրենց նորածին երեխաները գրկած զալիս են այս ապառաժի առաջը, երեխային մերկացնում, և այս ապառաժի վրայ լողացնելուց յետ երեխայի շապիկը մէջտեղից պատում, երկու կտոր են անում և ձգում այս ապառաժի վրայ, և լուս հեռանում, յուսալով որ երեխայի հիւանդութիւնն այդ շապիկի հետ թողին այս ապառաժի վրայ:

Թալալոսի քար.—Զաղար ս. Նշանի վանքում, ուր հանդչում են եղիշէ պատմագրի նշխարները, գտնուում է մի ծակ քար, որ գիւղացիները ս. Թէոդորոս զօրավարի կամ Թալալոսի քար են կոչում. Սա մօտ 1,25 մետր բարձրութեան և մի մետր լայնութեան և 40 սանտիմետր թանձրութեան քար է՝ և մէջ տեղում մօտաւրապէս 20 սանտիմետր տրամագծով մի ծակ ունի. Այս քարի վրայ կայ մի եղծուած արձանագրութիւն, որից նկատելի է «ԵԿ զթուականութեան Հայոց...» բառերը:

Թպղով ախտաւորուած և կամ սովորաբար թալկացող երեխաներին բերում երեք անգամ անց են կացնում այս քարի ծակով և ապա լողացնում, այսպիսով երկար կեանք և առողջութիւն հայցելով:

Ժակ-քար.—Նարեկ գիւղի գերեզմանատանը կայ մի ծակ քար, որի միջով անց են կացնում ջերմ կամ թուլութիւն ունեցող երեխային, որպէսզի առողջանայ:

Մոքս աւանի Քաղըի թաղում ևս կայ մի ծակ քար, որի միջից անց են կացնում թպղի ունեցող, նիհար, երեխաներին, որպէսզի լաւանան:

Մանղի քար.—Մոքս աւանի Աբրահամենց թաղում կայ մի

սանդի քար, որի մէջ լողացնում են այն երեխաներին, որոնք շուտով ոտք չեն ենում:

Ֆալլիս քար.—Արտամէտում, ձորի լանջին, աղբիւրից փոքր ինչ քարձը կայ մի ահագին քար, մօտ 2 մետր քարձութեան և 1¹/₂ մետր լայնութեան, որի վրայ քանդակուած է ֆալլիւս: Այս քարը այժմ, որքան նկատելի է, իւր նախնական տեղում չէ, այլ ներքեն գորուած և անխնամ ձգուած: Մի այսպիսի քար էլ այգիների մէջ կայ, միայն մէջ տեղից կորուած է:

Շահրազ գիւղի (Վանի մօտ) արեմտեան կողմը, արտերի մէջ կայ մի մեծ քար, որի վրայ քարձադիր քանդակուած է ֆալլիւս: Հբեր կանայք ուխտ են գալիս այստեղ, եօթն անգամ պըտըտում այս քարի շուրջը և մէջքերը նփում այդ քարի կըրծքի ֆալլիւսին, յուսալով այսպիսով զաւակ ունենալ:

Շուշանց գիւղում, Ս. Գէորգ եկեղեցուն կից քարձրանում է մի քարաժայռ, որ իւր գաղաթին ունի ֆալլիւսին նմանութիւն բերող մի սուր, մի մասը կոտրուած ծայրը եկեղեցին շատ հասարակ է և չունի մի առանձին սրբութիւն, միայն աւանդութիւնը նրա հիմնարկութիւնը վերագրում է Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի գուստը՝ Շուշանին, որ և գիւղի հիմնադիրն է: Բնդհանրապէս ամեն կիրակի և յանաւորապէս ամեն տարի ապրիլի 23-ին, ս. Գէորգի յունաց տօնին, մեծ քազմութիւն, մանաւանդ ամուլ կանայք ուխտ են զալիս այստեղ: Հաւանանական է, որ ժայռի պաշտամունքը փոխանցած լինի եկեղեցուն:



Ս. Գէորգի ժայռը

Երի ապրիլի 23-ին, ս. Գէորգի յունաց տօնին, մեծ քազմութիւն, մանաւանդ ամուլ կանայք ուխտ են զալիս այստեղ: Հաւանանական է, որ ժայռի պաշտամունքը փոխանցած լինի եկեղեցուն:

Զ Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Տիգրիսի ակունքը.—Տիգրիսի ակունքը, որ գտնւում է Շատախի Օլաման ասորի գիւղից մի ժամ դէպի հարաւ, մի դաշտի մէջ, մի յորդ աղբեւք է, որ կոչւում է Արքայութեան աղբեւք, կամ քրդերէն Կահնի բահաշտ և պաշտուում է ինչպէս հայերից, այնպէս և ասորիներից ու քրդերից: Աղբիւրի վրայ մի հասարակ մատուռ է շինուած, ուր ընդհանրապէս միշտ, իսկ մասնաւորապէս Համբարձման տօնին, հայերի, ասորիների և քրդերի ահագին բազմութիւն ուխտ է գալիս: Շատախի հայերը հաւա-

տում են, որ Վարդավառի գիշերն այս ակից անմահութեան մի խնձոր է դուրս գալիս և գնում, անցնում Շատախի միջով, ուստի և այդ գիշերը Շատախեցիներն անքուն հսկում են գետի ափին, որպէսզի նկատեն, և ով տեսնի ինչ խնդրէ՝ խսկոյն կը կատարուի:

Արքայութեան աղբիւրը բուժիչ է համարւում նաև ոչխարների մէջ տարածուած հիւանդութիւնների, այնպէս որ մի տարափոխիկ հիւանդութիւն երևցած միջոցին այս երեք, հայ, ասորի և քիւրդ ժողովուրդներն էլ քշում են իրենց հօտերը դէպի այս աղբիւրը, մի ոչխար մատղում, և ապա այս աղբիւրի ջրից սրսկում են ոչխարների վրայ:

Բակշանց աղբիւր.—Շատախ գաւառի Խումար գիւղի արեւելեան և Զքէշ բերդի հարաւային կողմը. Բակշանց անունով մի յորդ աղբիւր կայ, որի վրայ մի փոքրիկ մատուռ է կառուցուած. Գլխաւորապէս յօդացաւ ունեցող հայերն ու բրդերը ուխտ են գալիս այստեղ, մատաղ կտրում, այս ջրի մէջ լողանում, յուսաւով առողջութիւն գտնելի եթէ հիւանդը չի կարողանում անձամբ գալ, նրա համար գալիս ջուր են տանում, միայն ճանապարհին ջուրը գետնին չեն դնում, թէ չէ զօրութիւնը կը կորցնի:

Թրդերը եայլա (զօգան) գնալին իրենց աւելորդ իրերը, զարդերը, իւղ, պանիր բերում դնում են այստեղ, իբրև զիարէթին ամանաթ, tabou, հաւատացած լինելով, որ ոչ ոք չի համարձակուի ձեռք տալ, թէ չէ սուրբ աղբիւրը խստօրէն կը պատժէ:

Եփրատ-զետ.—Մանր երկունքի միջոցին Եփրատ գետն անցած մարդու կանչում են, որ գայ երեք անգամ վէշ տղոցկանի բերանից, և իւր քղանցքի մէջ ջուր ածելով խմեցնէ նրան:

Երբեմն աղջիկ երեխաների անունը Եփրատ են դնում, ինչպէս և Արաքս, Արաքսի, Արաք:

Մինի ջուր խմած միջոցին զգուշանում են նրան որևէ վնաս պատճառելու, մեծ մեղք համարելով այդ և նոյնիսկ կարծում են, թէ օձը մարդու ջուր խմած միջոցին չի մօտենալ, և այստեղից էլ յառաջացած է օձ վեր ջրին խարամ չանից դարձուածքը:

Եթէ երկու հոգի միաժամանակ ջուր խմեն, նրանցից մինը շուտով կը մեռնի:

Երբ առուն ջուր են կապում երեխաները վազում են ջրի ծայրը համբուրելու, և ով առաջինը յաջողում է՝ հաւատում են թէ նրա մայրը մի արու զաւակ է ունենալու.

Մննդկանը քառասունքը լրացնելիս վերցնում է մի կամ երկու զոյդ հաց և առաւօտ վաղ, արշալուսին, առանց որևէ մէկի

հետ խօսելու գնում է աղբիւրի կամ գետի եղր, հացը գնում ջրի մօտ, սափորը ջուր ածում և վերադառնում:

Վարդավառին միմեանց վրայ ջուր սրսկելու ընդհանրացած սովորութիւնն այստեղ էլ կայ: Ջուր սրկելիս ասում են գրեթէ երգելով՝

Վարդավառ,

Վարձքդ կատար:

Երեխային, կաթսատամերը բշտելիս, երբ առաջին անգամ լողացնում են հատիկ (խաշած ցորեն) են ածում գլխին, որը և տալիս են հաւերին:

Նորածնի ընկերքի վրայ մի ասեղ են շուլուլում և ձգում գետը:

Ծննդաբերութիւնը հեշտացնելու համար քահանային ջուր են օրհել տալիս և խմացնում ծննդականին:

Ամկու-քերդի աւազանի թապը.— Ամկու քերդի գագաթին սառն ջրի մի աւազան կայ, որի մէջ երկու թաս կայ ձգած: Ասում են, թէ ոչ թէ երկու այլ երեք թաս է, և ով որ արժանանայ երրորդը տեսնելու, անշուշտ իւր սրտի սիրածին կառնի: Այս պատճառով էլ երիտասարդներն ու աղջկներն ահագին դժժուարութեամբ բարձրանում են այդտեղ, այդ ջրից խմում, և ժամերով նայում աւազանի մէջ, բաղձալով տեսնել երրորդ թասը:

Եօթ-թոնիք.— Լեզք գիւղի հիւսիս-արևելեան կողմը մի քանի աղբիւրներ կան, որ եօթ թոնիք են կոչւում: Այսաել գալիս են առաւելապէս կանայք և ամէն տեսակ հիւսնդութեան համար բժշկութիւն հայցում: Աւանդաբար պատմում են, թէ այս աղբիւրների տեղում մի ժամանակ մի շատ բարեպաշտ քահանայի տուն էր բարձրանում, ուր ամեն օր եօթը թոնիք էր վառում, թէ գերդաստանի անդամների և թէ բազմաթիւ հիւրերին հաց մատակարարելու: Մի օր քահանան պատարագ մատուցանելիս նկատում է, որ իւր կտրած նշխարը սովորականի պէս չի կտըրում, մնացել է միակտուր: Ուստի մտածում է, որ իւր գերդաստանի մէջ այդ օրը որևէ մեղք է գործուել, շտապում է տուն և հարցնում է սիրուհուն, թէ որևէ մեղք չի գործել:

Տիրուհին, որ քահանայից աւելի բարեպաշտ է եղել, խոստովանում է, ասելով, թէ առաւօտը մի աղքատ եկաւ և Թրիստոսի սիրոյն համար մի հաց խնդրեց, տուի, յետոյ նոյն խօսքեցով մի կտրո էլ պանիր ուզեց, տուի, ապա յանդգնեցաւ և նոյն Քրիստոսի սիրոյն համար մի համբոյը ուզեց, այն էլ տուի, միթէ կարելի էր միրժել, քանի որ Քրիստոսի սիրոյն համար էր: Քահանան բարկանալով ասում է. Եթէ ոչինչ չի կարելի մերժել

Թրիստոսի սիրոյն անունով, հապա դու քեզ ձգիր այդ թոնրի մէջ, Տիրուհին անմիջապէս ձգում է իրեն թոնիրը. իսկոյն բոցավոր թոնիրը մի աւազանի է փոխում. քանանան այս հրաշքը տեսնելով ինքն էլ իրեն ձգում է աւազանի մէջ, ուր երկուսն էլ ձուկի են փոխում:

Վանայ լճի զոհաբերովթին.—Վանայ լիճը ալեկոծուելիս նաւաստիները զանազան իրեր են ձգում լճի մէջ, որ «չարը խափանուի», ալեկոծովթինը դադարի:

Սուրբ աղքալիներ.—Հայոց Զորի մէջ Անգղ գիւղի մօտ, Գարենից վանքի առջնից անցնող Անգղայ կամ Խոշապի գետի ափին բարձրացող ժայռից մի աղքիւր է բղխում, որ յայտնի է «Ձերմուկ» անունով: Թէ այս աղքիւրը և թէ այս ժայռը սուրբ են համարւում և հայ ու քուրդ ուխտաւորներ ուխտ են գալիս այստեղ, այս ջրով լուացում, իրենց հանդերձի կտորներից դընում ժայռի ծերպերի մէջ, և փոքրիկ քարեր քսում ժայռի կըրծքին որոշ խորհուրդ դնելով մտքերին, եթէ քարը կպչում է ժայռին՝ սա նշան է, որ այդ խորհուրդը կատարուելու է, իսկ եթէ չի կպչում չի կատարուելու:

Մոքսի Մափանց գիւղում կայ մի աղքիւր և մի մկնալոն կամ մինձ ծառ, որ սուրբ են համարւում:

Զեյվա գիւղում Ս. Վարդան վանքի մօտ կայ մի սառն աղբիւր, որ սուրբ է համարւում:

Ս. Արրահամի վանքի մօտ կայ մի աղքիւր, որ սուրբ է համարւում: Աւանդութիւնն ասում է, թէ Արրահամ Խոստովանողը վերադառնալով Խուժաստանից, այժմեան վանքի տեղում մի մատու է կառուցել և այդտեղ ճգնաւորական կեանք վարել: Մատրան մօտ ջուր չէ եղել, և Արրահամը ստիպուած է եղել գընալ մի ժամ հեռու գտնուող աղքիւրից ջուր խմելու: Մի օր էլ աղքիւրից վերադառնալիս սաստիկ տապից նեղուած սկսում է արտասուել, գալիս տեսնում է, որ մատրան մօտ մի աղքիւր է բղխում և մի ծայն է լսում, որ ասում է. «Արրահամ, այս ջուրը ու քո գերեզմանը թոն ցաւագարներին բժշկութիւն պարզենա:»

Եւ երբ Արրահամը մեռնում է, նրան թաղում են այս մատրան մէջ ու նոր տաճար կառուցանում: Այժմ էլ Արրահամի գերեզմանը և այդ աղքիւրը իւր մօտի ուռենու հետ ուխտատեղի է համարւում:

Ներքին Խոշաբի Խառակոնիս գիւղի մօտ կայ մի աղքիւր որ կոչւում է ս. Մարգիս, սրա վրայ մի փոքրիկ, հասարակ մատու է կանգնած, շուրջը կան սուրբ ծառեր: Ամեն տարի ս.

Յարութեան և Համբարձման տօներին ուխտ են գալիս ոչ միայն Խառագոնեցիք, այլև շըջակայ գիւղացիները:

Վարագայ լերան հիւսիսային ճիւղի վրայ, Կողպանց գիւղի մօտ, դարաւոր ուռենու ներքև կայ մի աղբիւր, որ սուրբ է համարում:

Կաթն-աղբիւրներ.—Ս. Բարդուղիմէոս վանքի հիւսիսային կողմը, պարսպի ներքև կայ մի աղբիւր, «Կաթն աղբիւր» անունով, որ սուրբ է համարում: Թէ հայ և թէ քիւրտ բորոտները ուխտ են գալիս այստեղ, սրա ցեխից քսում են բորի վրայ, մի ժամ այսպէս թողնում և ապա գնում Աղբակայ գետի մէջ լողանում, հաւատարով, որ բորը պիտի անցնի:

Սակաւակաթ կանայք էլ գալիս ս. Բարդուղիմէոսի վանքից հաց են խնդրում, տանում այդ կաթնաղբիւրի ջրի մէջ թրջում և ուտում, որպէսզի իրենց ստինքների կաթը աւելանայ:

Սւանդաբար պատմում են, թէ Սանատրուկ թագաւորը և իւր շունը բորոտ են եղելի Մի օր շունը գալիս անցնում է Աղբակայ ջրով, մտնում կաթն աղբիւրի մէջ, և ապա կրկին Աղբակայ ջրի միջով անցնում գնում իւր տիրոջ մօտ: Սանատրուկ թագաւորը տեսնում է, որ շան վրայի բորը անցել է, ինքն էլ հետեւել օրը միենայնն է անում, լողանում է Աղբակայ ջրի և Կաթ աղբիւրի մէջ, բորոտութիւնից սրբւում, ուստի և այս աղբիւրի մօտ, բըրի գագաթին, ս. Բարդուղիմէոսի գերեզմանի վրայ կառուցանում է այժմեան ս. Բարդուղիմէոսի վանքը:

Բ. Վերին Վարագում կայ սառն աղբիւր, որ կաթնաղբիւր է կոչւում. այստեղ ևս ուխտ են գալիս սակաւակաթ կանայք:

Գ. Վանի Այգեստանում կայ մի կաթնաղբիւր, որ սուրբ է համարում: Արու և էդ գաւակների սակաւակաթ մայրերը առանձնապէս վերցնելով իրենց հետ հաց, պանիր, խաշած ցորեն (հատիկ), մօմեր ու խունկ, միասին գնում են այդ կաթնաղբիւրը, մոմերը վառում այդ աղբիւրի գլխին, խունկը ծխում աղբիւր առջե, իրենց ծծերը լուանում այդ ջրով, և ապա ծիծ տալիս հետները բերած իրենց երեխաներին, բայց ոչ թէ իւրաքանչիւրն իւր, այլ միւսի երեխային: Վերջում միասին ուտում են իրենց բերած պաշարը՝ հացը, պանիրը և հատիկը, աւելացածը դնում աղբիւրի գլխին ու վերադառնում:

Դ. Շատախի Թաղ գիւղի արևելեան կողմը, Տիգրիսի ձախ ափին, Շինու-մազրա գիւղի մօտ կայ մի սառն աղբիւր, որ կոչւում է «Կաթն աղբիւր»: Սակաւակապ կանայք վերցնում են եփած երկու ձու, մի ասեղ, երկու հաց, մի քիչ հատիկ (խաշած ցորեն) և գնում այս աղբիւրի մօտ ուխտ: Երկու ձուն և ասեղը

դնում են աղքիւրի մէջ, հացը՝ աղքիւրի գլխին, հատիկը ուտում են և աղքի ջրով իրենց ստիճաները լուանում, ջրից կուշտ խմում և վերադառնում լի յուսով, որ իրենց ստիճքի կաթը շատանալու է:

Զերմից ըստով սուրբ աղքիւրներ.—Ա. Ս. Խաչ վանքում կայ մի սառն աղքիւր, որ ս. Գայիանէի աղքիւր է կոչում և սուրբ է համարւում: Իր այդ անունը, աւանդութեան ասելով, աղքիւրն ստացել է այն հանգայմանքից, որ ս. կոյս Գայիանէն փախստեան միջոցին մի առ ժամանակ մացել է այս ս. Խաչ վանքի տեղում և օգտուել այս աղքիւրից: Զերմ ունեցողներն ուխտ են գալիս այսաեղ, աղքիւրի առջև խունկ ծխում, նրա ջըրով լողանում և ապա իրենց հանդերձից մի կտոր պատռելով զընում աղքիւրի քարերի մէջ, հաւատալով, որ այդպիսով իրենց ջերմը փոխանցում են աղքիւրի քարին:

Բ. Թիմարի Սոսրաստ գիւղի հիւսիսային կողմը մի աղքիւրի ական վրայ մի փոքրիկ մատուռ կայ, մի սուրբ Ցափհաննէս և կամ Սըրուանէս է կոչում: Զերմ ունեցողները ուխտ են գալիս այսաեղ, այդ ջրից խմում և նրա կողքին պառկում: Ասում են, թէ երբ մի նախշուն օձ այդ տեղերից ենին ու քնած ջերմողի վրայից անցնի՝ վերջինս կրժշկուի:

Գ. Կուռուպաշ գիւղի արեելեան կողմը կայ մի աղքիւր, որ կոչում է Աւազանի խաչին (Աւազան խաչի). Ջերմ ունեցողներն ուխտ են գալիս այսաեղ և սրա ջրով լողանալով բժշկութիւն հայցում:

Դ. Մոքսի Առնանց գիւղի մօտ, Առնոս լերան դագաթին, Կաւդալան ուխտատեղիում կայ մի սառն աղքիւր, որ պաշտում է որպէս ջերմի և յօդացաւի բուժիչ:

Ե. Ս. Ցակորայ վանքում ս. Ցոփհաննէսի անուան նուիրուած մատրան մօտ կայ մի աղքիւր, որի մասին պատմում է, թէ ս. Ցակորն է բղիեցրել, ուստի և սուրբ է համարւում: առաւելապէս ջերմ ունեցողները գալիս այս ջրով լողանում են, որ բըժշկուին:

Զ. Ս. Թովմայի վանքում կայ մի սառն աղքիւր, որ սուրբ է համարւում և ջերմի բուժիչ:

Է. Նարեկայ աղթատեղու մէջ երկու մետրաչափ խորութեան ջրի փոս կայ, ջերմ ունեցողները գալիս եօթն անգամ ցատկում են սրա մէջ, յուսալով բժշկութիւն գտնել:

Ը. Վանի հարաւային կողմը՝ կենդանանց գիւղի սահմանում գտնում է մի ծծմբային աղքիւր, Զերմուկ անունով, ուր գիմում են ջերմ և մորթու հիւանդութիւն ունեցող հիւանդ ուխտաւորներ:

Դորից բուժող սուրբ աղքիւրներ.—Գեաւառ գաւառի Ալվար գիւղում բղխում է մի աղքիւր և կազմում մի աւազան, լի ձըկներով։ Տեղական հայ և քիւրդ բնակիչներից դող և գեղնուցք ունեցողներն ուխտ են գալիս այստեղ և բժշկութիւն հայցում։ Խրբե սուրբ աւազանի, ձկներին էլ վաս չեն հասցնում և հաւատում են, որ եթէ այդ ձկներից ուտեն, չեն ապրիւ

Բորից բուժող սուրբ աղքիւրներ.—Ալիւր գիւղի արևելեան կողմը կայ մի հինաւուրց մատուռ Կարի-վանը անունով։ Այստեղ կայ մի աւազան, շրջապատուած ծառերով։ Թէ աւազանը և թէ ծառերը սուրբ են համարում։ Բորոտները ուխտ են գալիս այստեղ, մոմ վառում, խունկ ծխում և ապա այս աւազանի ցեխից քսում իրենց բորի վրայ, հաւատալով, որ պիտի բուժուին։ Այստեղ ուխտ են գալիս նաև քեպէ կամ ալք ունեցող կանայք, որպէսզի իրենց նորածին երեխաներին վազահաս մահից ազատել կարողանան։

Կարմրուորի վանքի մօտ կայ ջրի մի աւազան, որ սուրբ բուժիչ է համարում։ Բորոտները նախապէս մի քիչ մուրալուց յետոյ, ստացած ողորմութեամբ խունկ ու մոմ են գնում, բերում այս աւազանի առաջ ծխում ու վառում, և յետոյ լողանում միանգամայն բորոտութիւնից սրբուելու խորը հաւատով։ Հայոց-Զորի էջմիածնում կայ մի աւազան, ուր բորոտները լողանում են սրբուելու յուսով։

Յօդացակից բուժող սուրբ աղքիւրներ.—Մոքսի Առնանց գիւղում, Կաւդալան անունով տեղում կայ մի աղքիւր, շուրջը ծառեր, թէ աղքիւրը և թէ ծառերը սուրբ են համարում և առաւելապէս յօդացաւ ունեցողներն ուխտ են գալիս այստեղ, իւրենց հետ բերելով մի մի աքաղաղ, իրը մատաղ։

Մոքսի Կճաւայ գիւղի տակ, Քաւայ Նարեկացի վանքի մօտ մի աղքիւր կայ, որ նոյնպէս սուրբ և յօդացակի բուժիչ է համարում։

Մոքսի Ամենափրկիչ վանքի մօտ, Ժայռի միջից բղխում է մի աղքիւր, որ սուրբ է համարում։ Յօդացաւ ունեցողները գալիս են այստեղ ուխտ, այս ջրով լողանում կամ ցաւող տեղերին քսում։ Աղքիւրի մօտ կան մի քանի սուրբ համարուող ծառեր։

Զանազան հիւանդութիւններից բուժող սուրբ աղքիւրներ.—Հայոց-Զորի Քարավանց գիւղում կայ Զերմուկ անունով մի աղքիւր, որ սուրբ է համարում։ Այստեղ ուխտ են գալիս դող, ջերմ և բոր հիւանդութիւններն ունեցողները և այս ջրով լողանում հաւատալով, որ կարսդ են բժշկուիլ։

Շատախի Թաղ գիւղի արևելեան կողմը մի սառն աղքիւր կայ,

որ «Ձերմուկ» է կոչւում: Մի որևէ երեխայի ականջները ցաւելիս մայրը երեխային գրկած՝ առնում է մի զոյտ հաց կամ գաթայ, մի քանի մոմ և ուխտ գալիս այս աղբրին, մոմերը վառում, հացը կամ գաթան դնում աղբրի մօտ և նրա ջրից քսում երեխայի ականջներին՝ որ լաւանայ:

Ծվատան գիւղի մօտ (Վանի հարաւային կողմը), հազիւ շկիլումետք հեռու դէպի հիւսիս, կայ մի սուրբ աղբիւր, «Փաշի աղբիւր» անունով, որի մօտ ուխտ են գալիս այն մայրերը, որոնց երեխաները հող ուտելու սովորութիւն ունին: Աղբիւրի առաջ մոմ վառելուց յետ, նրա հողից մի պտղուց վերցնում ուտեցնում են երեխային, որ գաղարի հող ուտելուց:

Շատախիք Թաղ գիւղից դէպի արեելք, Կասըր գիւղի մօտ կայ մի աղբիւր, որ սուրբ է համարւում և որի մօտ ուխտ են գալիս նրանք, «որոնց փորում օձ է լինում» (թերես սովիտեր), Ուխտաւորը մատաղ է կտրում, երկու օր շարունակ աղի բաներ ուտում և ջուր բնաւ չի խմում: Երկու օրից յետոյ գալիս կրանում է ջրի վրայ և ցանկանում է ջուր խմել, սակայն մօտի մարդիկը թոյլ չեն տալիս, և յետ են քաշում: Վերջ ի վերջոյ չօձը ծարաւից նեղուած դուրս է գալիս այդ ուխտաւորի բերանից» և ընկնում ջրի մէջ, անմիջապէս յարձակւում են վերան և սպանում:

Սողկայ աւեր վանքում ևս մի ջրի աւազան կայ ծառերով շրջապատուած: Այստեղ ևս բրոտաներն ու ջերմ ունեցողները գալիս են լողանալու, որպէսզի բժշկուին:

«Ակորու քարի» մօտերքը մի սառն աղբիւր կայ, որ «Պըլթենից աւազան» է կոչւում, և մօտի հինաւորց ուռենու հետ միասին սուրբ է համարւում: Այստեղ ևս ուխտ են գալիս զանազան հիւանդութիւններ ունեցողներ՝ բժշկութիւն հայցելու:

Օրնեած ջուր.— Օրնեած ջրով և կամ մեռոնաշրով լուանում են հարամուտած ամանները, այսինքն այնպիսիք, որոնց գիւղել է մուկը և շունը, որպէսզի սրբուին:

Բ Ո Յ Ս Ե Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ի Ն Ք

Սուրբ պուրակներ.— Ս. Յակոբայ վանքի հիւսիսային կողմում, ձորակի մէջ կայ թեղի ծառերի մի պուրակ, որ ամբողջովին սուրբ է համարւում. սրա չորացած ճիւղերն անգամ ոչ ոք չի համարձակում կտրել կամ տանել: Մերձակայ Յախմանց գիւղի քիւրդ աղան մի ծառ էր կտրել տարել այս պուրակից և նոյն օրը կուրացել էր: Այս պուրակի մէջ թեղի հինգ ծառ բուսած են

միմեանց մօտ, շրջանաձև, և սրանցից ամենահաստի ընի մէջ կայ մի ծակ, որ $\frac{1}{2}$, մետր խորութեամբ իջնում է գէպի արամատը: Շըշակայ հայերն այս հինգ ժառերի միջև քարեր դարսելով մի փոքրիկ տնակ են գոյացրել, ուր խունկ են ծխում և մոմ վառում: Վէրք կամ յօդացաւ ունեցող թէ հայերը և թէ քրդերը գալիս են այստեղ և մոմ վառում, աքաղաղ զինում և ապա՝ այն երկար ձողը, որ միշտ ընկած է այդ հաստ ծառի վերոյիշեալ ծակի մէջ, քաշում հանում են, և նրա վրայ մնացած ծառի հիւթը քսում իրենց վերքերին և կամ ցաւող յօդերին, և ապա երկրպագելով սրանց մօտ եղած աղբերին, լողանում են սրա առջն տարածուած աւազանում և կամ այս աղբերի լրից լցնում իրենց վըրայ: Այս բոլորից յետոյ պատռում են իրենց հանդերձներից մի կտոր և կապում այս հինգ ծառերից մինի ճիւղին, հաւատալով, որ այսպիսով կապում են և իրենց հիւանդութիւնն այդտեղ:

Կների կոչուած դեղնագոյն ծառն ընդհանրապէս սուրբ է համարւում: Եթէ նրա ստուերն ընկնի օձի վրայ, վերջինս անմիջապէս կը սատկի: Մարդիկ սովորաբար այս ծառի ճիւղերից առնում են իրենց ձեռը, որ իրենց օձ և չարքեր չմօտենան: Սովորաբար արօրի վարոցները այս ծառի ճիւղերից են շինում, հաւատալով նաև, որ սրա հարուածներից եղները չեն նեղանալ:

Այսպիսի ծառերի մի փոքրիկ պուրակ գտնուում է Շատախի Տաղասպար գիւղում, որ շատ հին ժամանակից իվեր պաշտում է:

Շատախի նարի գիւղի մօտ, Խաչանիսայ և Նիւքիսայ մէջ տեղ, Բիգանց գիւղի մօտ կան 8—10 ծառերից բաղկացած փոքրիկ պուրակներ, որ սուրբ են համարւում: Հայերը և մանաւանդ էղդինանց և այլ տոնմի քրդեր ոչ միայն ուխտ են գնում այստեղ, այլ և եալյա գնալիս իրենց աւելորդ և կամ թանգագին իրերը զնում են այդտեղ, զգիւրէթին ամանաթ են տալիս», որ անկորուսս մնան վերաբարձին, վերցնեն: Եւ յիրաւի, ոչ ոք չի համարձակւում այդ տաօս արած իրերին ձեռք տալ:

Բաշկալէի վանք կամ Դէր կոչուած գիւղի (ուր է ս. Բարդողիմէոսի վանքը) և Հասբիստանի միջն կայ, 50—60 վայրի ծառերից բաղկացած մի պուրակ, որ սուրբ է համարւում:

Բաշկալէի մօտ, Ալալեան կամ ս. Յակոբ գիւղում կայ մի պուրակ, որ պաշտուում է ս. Յակոբ անունով: Այս պուրակի անունով էլ յաճախ կոչում է գիւղը:

Հայոց-Զորի Հնդստան գիւղի արեելա-հարաւային կողմում կայ մի փոքրիկ պուրակ, որ սուրբ է համարւում: Պատմում էն թէ մի քիւրտ մի ծառ էր կտրել և թէպէտ տեսել էր, որ կտրելու միջոցին ծառից արիւն է հոսել, այսուամենայիւ շալակել

տարել էր դէպի տուն, սակայն ճանապարհին սաստիկ յոզնել էր և նստել՝ ճանգմտանալու. միայն երբ կամեցել էր վեր կենալ, շարունակելու ճանապարհը, տեսել էր որ ծառը կպել է մէջքից և այնքան է ճնշում, որ չի կարողանում վեր կենալ Դիշերը վրայ էր հասել և քիւրտն այդ դրութեամբ մնացել էր այդտեղ. երազում տեսել էր մի ծերունի, որ նրան ասել է, թէ յետ տար ծառը իւր տեղը, կազմառուիս Առաւօտեան դժուարութեամբ վեր էր կացել, վերադարձել և դրել ծառը իւր կոճղի վրայ, և այս ժամանակ միայն ծառը պոկ էր եկել նրա մէջքից:

Սուրբ ծառեր.—Թիմար գաւառի Աղեր գիւղի մօտ, Վանայ ծովի ափին, գտնուում է մի հաստարուն ուռենի, որ «Թալալոց» է կոչւում և սուրբ համարուում: Դողացնող երեխաներին սանուում են այս ծառի տակ, մոմ վառում, երեխայի շապիկը հանուում, մէջտեղից պատուում և կախուում ծառի ճիւղից, հաւատալով որ անմիջապէս առողջութիւն պիտի չուրիէ ծառը: Այս ծառի ճիւղերը ևս ոչ չի համարձակւում կտրել. պատմում են թէ ինչպէս մի վարդապետ և մի ուսուցիչ, որ յանդէնել են այդ անելու, խստիւ պատմուել են ծառից:

Վարագայ լերան հիւսիսային ճիւղի վրայ, Կողպանց գիւղից փոքր ինչ բարձր, կայ մի դարաւոր ուռենի, որ սուրբ է համարուում: (Ցես նկարը) Սրա մօտ կայ նաև մի սուրբ աղբիւր, և մի սուրբ քար, որ Այնակայ ցից է կոչւում:

Զէյվայում կայ մի կիհի ծառ, որ հաւասարապէս պաշտուում է թէ հայերից և թէ քրդերից: Հայկական աւանդութիւնն ասում է, թէ սա յառաջացել է Դրիգոր Նարեկացու տնկած սեփական վարոցից (եղ քենու ճիպաու):

Զեռնակ գիւղում (Հայոց-Ճոր), ճանապարհի վրայ կայ մի հաստարուն բարդի, որ երկու մարդ հաղիւ կարող է գրկել: Սա սուրբ է համարուում թէ հայերից և թէ քրդերից, որոնք սրա ճիւղերից փոքրիկ կտրներ կապում են հազարող երեխաների վզին, որ հազը կտրի:

Զէյվա գիւղում կայ մի կիհի ծառ, որի մասին պատմուում է, թէ իրը Դրիգոր Նարեկացին է տնկել, և որը պաշտուում է թէ հայերից և թէ քրդերից:

Մահմուդէի գաւառակի Ուռիկ գիւղում կայ մի բարդի, մի մետր տրամագծով, որ նոյնպէս սուրբ է համարուում:

Նոյն գիւղում կայ նաև մի ուռենի, որ նոյնպէս սուրբ է համարուում և որի ճիւղերն ուխտաւորները բռնում ողբում են, որպէսզի իրենց ձեռքերի շըղառկը կամ կոծոծը (մատների վրայի բշաբեր) անցնի:



Կողմանց առջև բրածական դիմումունց պահանջական գործությունը

Հայոց-Զորի Եկմալ գիւղում կայ մի ուռենի, որ մի մետր տրամագիծ ունի, և պաշտուում է թէ հայերից և թէ քրդերից։ Մըա մօտ կայ մի սուրբ աղքիւր, որի ջրով լողանում են ջերմ ունեցողները՝ բժշկուելու յուսով։

Հայոց-Զորի Հնդստան գիւղի արևելեան կողմը մի քանի ծառեր կան, որ սուրբ են համարւում Սրանց մօտ գտնուում են երկու գերեզմաններ, որոնց մասին աւանդաբար պատմւում է, թէ հաւատի համար նահաստակուած քոյր և եղջօր հանգստարան են:

Շատախի գաւառի Սոբանց գիւղի մօտ կան չորս չինարի ծառ: Սրանցից իւրաքանչիւրի տրամագիծը երկու մետրից աւելի է: Սրանք ևս սուրբ են համարւում թէ հայերից և թէ բրդերից:

Վանի Այգեստանի մէջ կայ երկու սուրբ ծառ, մինը Արարոց փողոցի հիւսիսային կողմը, միւսը՝ «Միհքէ ճատէսի» կոչուած փողոցի վրայ գտնուած թրքաբնակ մի տան բակում: Այս վերջինը կոչուում է «Ականից ծառ», և կարելի է ենթագրել որ այսպէս կոչուած է թերեւս այն պատճառով, որ երբեմն այստեղ է գտնուել Արձէշի Ականց գիւղաքաղաքի ո. Գէորգայ վանքի նուիրակի տունը: Ս. Գէորգի վանքն այժմ էլ ուխտատեղի է վզերի վրայ «խժիլըժայ» կոչուած վէրքն ունեցող հիւսնդների համար:

Ականց գիւղի Ս. Գէորգ վանքի հացի ծառերը սուրբ և հրաշագործ են համարւում: սրանց առջև խունկ են ծխում, մոմ վառում և սրանց տերեներով լուսցուում:

Կարճկանի Խարզինդ գիւղում, անտառի մէջ, կայ մի մեծ ծառ, որ պաշտառում է:

Բաշկալէից դէպի Չուխ, դաշտի մէջ, կանգնած է մի մեծ բարդի ծառ, որ պաշտառում է ո. Յովհաննէս անունով:

Դժնիկ չար փուշը խփում են տների դռների վերև, որպէսզի չար ոգիները չնամարձակին ներս մտնել:

Նաև ընկոյզի կեղեր չեն վառում, որպէսզի ընկուզենին չըչորանայ:

Կանաչ խոտը կամ ծառի ճիւղը կրակի մէջ ձգելը մեղք է համարւում:

Եթէ Մաղկազարդի ուռենիները տնկեն, կարող են յետոյ կտրել և նրանցով հրաշքներ գործել:

Աղքրանց արում.—Եօթ եղբայրներ լեռ գնացած միջոցին սպանուել են քուրդերից և նրանց արիւնից բուսել է առղքրանց արունք կոչուող արիւնագոյն, տիուր ծաղիկը, որի մօտ գրեթէ միշտ լինում է «լայլայ» կոչուած ծաղիկը, որը կախած իւր զանգակաձև պսակը միշտ կաթիւներ է հոսեցնում—լալիս է—այդ եղքայրների վրայ *):

*) «Մշակ». Ապրօ նամակներ Թիւրքաց Հայաստանից,
1889 № 127.

Արինածաղկիկ.—Այսպէս են կոչում Վանեցիք լուի ծաղկին, և պատմում են թէ ս. Վարդանի արինից է առաջացել:

Լոշտակի արմատն ամենայն տեսակ հիւանդութիւնների դեղ է համարւում: Լոշտակը հանելիս արմատի շուրջը փորում են և ապա արմատը մի թոկով կապում են կատուի պոչից, որին ծեծելով ստիպում են քաշել հանելի Պնդում են, թէ լոշտակը դուրս քաշելիս այնպիսի մի սարսափելի ձայն է հանում, որ կատուն անմիջապէս ստիպում է:

Սպանդ բոյսը (Peganum), որ շատ վատ հոտ ունի, բուսնում է միայն զոհերի գերեզմանների վրայ:

Անոններ.—Վասպուրականում ես գործ են ածում Վարդ, Վարդուկի, Վարդան, Վարդգէս, Սիրվարդ անունները, որոնց արմատը վարդ է և որոնք ցոյց են տալիս, որ վարդը հայ դիցարանութեան մէջ որոշ տեղ է ըստել: Գործածական են նաև Մանիշակ, Շուշան, Համասափիւռ, Ասթառան անունները:

Խաղողի որթ.—Աստուած հայր Աբրահամին հիւր է եկել և սա մի հորթ է մորթել և հիւրասիրել նրան: Ճաշից յետոյ ոսկորները լցրել են վրանի կողքը: Երեկոյեան այս հորթի մայրը վերադարձել է հանդից և բառաչելով փնտոել նրան: Աստուած գթալով, հաւաքել է ոսկորները և վերստեղծել հորթը, սակայն վերջը նկատել է, որ մի ոսկոր մնացել է, վերցրել տնկել է հողի մէջ, որից և առաջացել է խաղողի որթը:

Գինի խմելիս բաժակը ամբողջովին պիտի դատարկել, այլապէս զբաննը կը մեռնի:

Եթէ խաղողի կտրած որթից հոսող հիւթը երեսին քսեն՝ շատ շուտով մազ կը բուռնի:

Հաց.—Յորին ցանելու նախորդ և յաջորդ մի քանի օրերը ցանողներն առագաստ չեն մտնում, այլապէս հացը նուազ կը լինի:

Ռշտոնիքում պսակի հետևեալ օրը բարեկամ կանայք մի բուռ ցորեն առած գալիս են թագաւորի տունը, ուր թախտի առաջ նստած են լինում թագաւորն ու քաւորը, իսկ թախտի վրայ կապուած վարագոյրի յետնը կանգնած են լինում նորահարսն ու հարսնքուրը: Եկող կանայք ցորենը շաղ են տալիս, արդէն ի նշան յարդանքի՝ ոտքի կանգնած, թագաւորի, ինչպէս և վարագոյրի վրայով թագունու գլխին՝ ասելով: Ծնորհաւոր ձեր խարս փէսէն, Աստուած շատ տարիներ խասցնի իրարմով, իսկ բով մէրով: ծերանան: Թագաւորի մայրը պատասխանում է: Ծնորհակալ եմ, նընշ վը քը լաճուն: Ոմանք էլ խնձոր են բերում և տալիս թագաւորին և կամ սրա մօրը:

Հացի սեւացած կամ այրած մամն ուտողը դրամ կը գտնի:

Սեղանն աւարտելուց յետ անմիջապէս հաւաքում են, որովհետև հաւատում են, որ հացի հրեշտակը սուփրի գլխին կանգնած է լինում, եթէ սուփրան երկար ժամանակ բցած մնայ, հրեշտակը կը յոգնի և կը թասի:

Եթէ հացը թխելիս հացառը (մէզրէկ) հացթուկի ձեռքից պրծնի ու թոնիր ընկնի՝ նշան է՝ թէ նոյն տանից մինը մեռնելու է:

Հաց թխելիս եթէ թոնիր մէջ, կողք կողքի խփուած երկու հացի եզրերը պատահմամբ միմեանց վրայ գան, սրանցից մինը հանում են և տան անդամներից մինի գլխի վրայ երկու կտոր անում, որպէսզի սա հարստանալու բաղդ ստանայ:

Նոր թխած հացերը միմեանց վրայ են գարսում և մի խորհուրդ մտքերում պահելով սկսում են հացերը համրել, եթէ վերջին հացը զոյդ թիւ կազմէ՝ նշան է, որ խորհուրդը կատարուելու է, բարի է, իսկ եթէ կենտ կազմէ չի կատարուելու, ձախորդ է լինելու:

Եթէ թոնիր մէջ հացը ձայն հանէ—մէջը մնացած օդը դուրս գալով ձայն յառաջացնէ—նշան է թէ այդ տարին հացը պէսը է աժանանայ:

Բաղարջ եփելիս թոյլ չեն տալիս, որ տղամարդիկ թոնրատուն մտնեն, այլապէս բաղարջները թոնիր կթափուին:

Պանդխտողի ճամբու պաշարից մի հաց գաղտնի վերցնում են, և մի ապահով տեղ պահում, որպէսզի պանդուխտը շուտ վերադառնայ, իսկ եթէ պատահմամբ կամ սխալմամբ այդ հացը ուտեն կամ գողանան, այդ նշան են համարում, որ պանդուխտը այլիս չի վերադառնալու:

Դիշերը շանը հաց չեն ձգում, որպէսզի տան բարաքեաթը չը պակասի:

Կաթնուկ.—Ոչխարն օրական երկու անգամ կթել սկսելիս կանայք իրենց հետ կաթնուկ կոչուած բոյսը տանում են, ոչխարը կթելուց յետ մէկմէկ հատ դնում նրանց մէջքին, որպէսզի սրա նման, ստինքի կաթն էլ առատ լինի: Նոյն օրը փոքր ինչ կթում են տիկ մէջ, որպէսզի իւղն առատ լինի:

Գագ.—Ասիկիւզալ գիւղի հիւսիսային կողմը, մի բլթ վրայ մի փոքրիկ մատուռ կայ, որ ս. Սարգիս է կոչում: Սրա շուրջը բուսնող գազ փշարոյսը սուբբ է համարւում, և գիւղացիք ասում են, թէ ուզ ս. Սարգսի գազեր վառէ, փուշ կը բուսնի անոր աշաց մէջ:

Արեւածաղիկ, պղածեղ, և սխստոր չեն ցանում իրենց տան առջնի պարտէզի մէջ, այլապէս տնեցիներից կը մեռնեն:

Սիստորի և սոխի կճեպը կըակի մէջ չեն ձգում, որպէսզի
վէրք ունեցողների ցաւը չսաստկանայ:

Երեխային չար աչբից պահելու համար մի սիստոր փաթա-
թում են կանաչ ու կարմիր մետաքսի թերով, մէջտեղն էլ մի
բուսա ամբացնում, կարում երեխայի գլխարկի մէջ:

Մել սովնիճը, որ արջնդեղի (nigelle, շերնչա) հունան է,
դիւահալած են համարում. սրանից զնում են ծննդկանի բարձի
տակը, որ չարերը չմօտենան, փաթաթում են հացի մէջ և երեք
բրտուճ (պատառ) տալիս ծննդկանին ուտելու՝ որ չար ալքերին
հալածէ փորից:

Դրումի կուտն առանց աղելու չեն ուտում, որ բթամիտ
չը դառնան:

Կ Ե Ն Դ Ա Ն Ի Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Ա. Գէորգի աքաղաղը.—Փութկու Ա. Գէորգ վանքում միշտ
պահուում է մի աքա-
ղաղ, որ ևս. Գէորգայ
դիկ» է կոչւում: Աս
պատահական աքաղաղ
չի լինում, պահանջ-
ւում է, որ ս. Գէորգը
մարդկանց երացում
երևայ և ասի, թէ այս
ինչ աքաղաղը ինձ
նուէր բերէք: Այս
աքաղաղը վանքում
կուսակրօնի կեանք է
վարում, զրկուած հա-
ւերի հասարակութիւ-
նից, նա ազատօրէն օգ-
տում է վանքի բոլոր
բարիքներից և ապա-
հովուած է, որ ոչ ոք
նրան վնաս չի հասց-
նիլ, և մեռնելիս էլ պա-
տուով և պատանքով



Ա. Գէորգի աքաղաղը

Կը թաղուի ս. Գէորգի եկեղեցու ժամատանը: Նա գոյնզգոյն ու-
լունքներով և արծաթէ զրամաներով զարդարուած մի մանեակ էլ
ունի, որ յաճախ ձգում են նրա վիզը: Մարդկանց նա շատ ըն-

տելացած է, հեշտութեամբ բռնուում է, ազատ շրջում է եկեղեցու մէջ և գիշերում ժամատանը: Երբ սաստիկ քից նեղուած ճանապարհորդներն ապաստանում են այս վանքում, սրտատրով սպասում են, թէ որ գիշերն աքաղաղը պիտի կանչէ, որովհետև հաւատում են, որ եթէ փոթորիկը շարունակուելու լինի, աքաղաղը չի կանչիլ, ուստի և նրա կանչը համարւում է ազդարար լաւ եղանակի, այնպէս որ աքաղաղը կանչած միջոցին ճանապարհորդները պատրաստում են և ճանապարհ ընկնում, այլ ևս չկասկածելով, որ այդ օրուայ ընթացքում փոթորիկ է բարձրանալու: Ոմանք էլ բռնում են աքաղաղը և կանգնեցնում իրենց գլխի վրայ. վերջինս արդէն սովոր լինելով հանգիստ կանգնում է: Ազարոնողն ուխտ է անում, եթէ պիտի արժանանամ ապահով տեղ հասնել, կամ եթէ վիճակուած է ինձ այս ինչ աղջկայ կամ տղի հետ ամուսնանալ, և կամ եթէ այս ինչ հիւանդը պիտի առողջանայ, թիղ աքաղաղը երեք անգամ կանչէ: Եւ շատ անգամ աքաղաղը մարդու գլխի վրայ կանգնած կանչում է:

Կոռունկ, աղաւնի, անձեղ, ծիծենսակ արագիլ, կրիա, գորտ, մրջիւն, ճպուռն դիտմամբ սպանելը մեղք է համարւում:

Ծովահայեաց ս. Աստուածածնի կոռունկը.—Աւանդութիւնն ասում է, թէ Սովահայեաց ս. Աստուածածնի վանքի հնձուռներից մինը մանգաղով վիրաւորում է մի կոռնկայ ոտ և բռնում բերում, տալիս է վանահօրը: Բարեպաշտ վանահայրը յանդիմանում է հնձուռըն, որ մեղք է գործել՝ վիրաւորելով կոռնկին, բժշկում է վէրքը և բաց թողնում: Մի առ ժամանակից յետոյ, մի օր, երբ այս վանահայրը ցանկանում է պատարագ մատուցանել, վանքում և շրջակայքում գինի չի գտնում: Վանահայրը մոլորուած չի իմանում թէ ինչ անէ, մէկ էլ յանկարծ թռչում, գալիս է այս կոռունկը և կացում բռնած երեք ողկոյզ խաղողը տալիս վանահօրը: Սա օրհնում է կոռնկին, մի ողկոյզը ճմլում և նրանով պատարագ է մատուցանում, երկրորդը թաղում եկեղեցու սեղանի տակ, իսկ երրորդը բաժանում հիւանդներին, որ անմիջապէս առողջանում են:

Մի ուրիշ անգամ էլ գարձեալ հնձի ժամանակ, երբ գաշտում մեծ կաթսայով կերակուր էր պատրաստում վանքի հընձուռների համար, տեսնում են, որ այս կոռունկը բարձր կանչելով պառյա է գալիս կաթսայի վերև և յանկարծ իրեն ձգում է կաթսայի մէջ: Գալիս հանում են կաթսայից և տեսնում, որ այդտեղ մի աժդանա օձ էլ է ընկած: Հասկանում են, որ կոռունկը տեսել է այդ օձը կաթսայի մէջ ընկնելիս և մի այսպիսի անձ-

նուիրութեամբ ազատել է բազմաթիւ հնձուորներին թունաւոռուելոց:

Այս դէպքից յետոյ այս Սովահայեաց ու Աստուածածնի վանքը վերակուուել է Կոնկան վանք:

Հաւալաւան կամ կանչկան հաւ եւ կամ կանչկանց հաւ.—Մի կին է եղել, որ իւր ամուսնուն չափազանց սիրել է, սակայն ամուսինը գնացել է պահանջատութեան և այլնս չի վերադարձել. անձնուէր կինը իւր սէրն ամբողջովին տուել է իւր նորածին որդուն, բայց մի օր տեսնում է որ արծիւը նրան օրօրոցից փախցրել է: Սարսափելի վշտից ճնշուած՝ խեղճ կինը հաւալաւան թռչունն է գտնում, թռչում ու ողբագին կանչում. և հանդիսան է առնում միայն այն ժամանակ, երբ սրտից երեք կաթ արիւն է հոսում:

Աղանձնի. — Սրբ մասին պատմում են թէ լեզու չունի, կարողանում է միայն վու վու անել, որովհետև երբ նոյը տապանից արձակել է նրան լուր բերելու, նրանից առաջ արձակուած ագռաւը յարձակուել է նրա վրայ և նրա լեզուն կծել, կտրել սակայն աղանձն հնար է գտել աւետիք տալու նոյին, կտրել է կանաչած ծառի ճիւղը և այն տարել նրան, որից նոյը հասկացել է, որ ջուրը ցամաքել է: Այս պատճառով էլ նոյն անիծել է ագռաւին և օրհնել աղանձնում:

Սիրելով աղանձնուն, տուն շինելիս յատկապէս փոքրիկ նիշեր են թողնում, որպէսզի աղանձները սրանց մէջ բուն դնեն:

Աղանձու պաշտաման մնացորդ կարելի է համարել և այն, որ մինչև այժմ Վասպուրականում շատ աղջիկների անուն Աղանձնի են դնում:

Կաթ պարզելող զորտ. — Կանի քաղաքամասի իսկալա կոչուած դռան մօտ գըրախանի (խաղախորդի) պարտիզում մի աւազան կայ, որի մէջ ապրում է թէ հայերից և թէ թուրքերից սուրբ և անմահ համարուած մի զորտ: Սակաւակաթ կանայք յատկապէս ցորեն են խաշում և բերում, այս աւազանի մէջ ածում, աղօթում և ջրիցը իրենց ծծերին քսում: Մեծ ուրախութիւն է պատճառում նրանց, երբ զորտը բարեհաճում է այդ, յատկապէս իւր համար խաշած ցորենն ուտել, զա նշան է համարում, որ ուխտաւորի ուխտը պիտի կատարէ, առատ կաթ պարզենէ: Ուխտաւորն անշուշտ երեք անգամ պիտի կըկնէ իւր այս զոհաբերութիւնը, երեք անգամ պիտի գայ՝ խաշած ցորենով:

Ս. Բարդաւլիմէոսի զումէշ. — Մինչև վերջին ժամանակներս ու Բարդուլիմէոսի վանքում պահուում էին մի կամ միքանի, էդ կամ որձ, զոմէշներ, որոնք անշուշտ ամբողջովին սպիտակ

պիտի լինէին։ Նոյնիսկ աչքերը և ոտներն սպիտակ պիտի լինէին։ Սրանք համարում էին ու Բարդուղիմէոսի վանքի նշանակ և ուր էլ որ ծնուէին, հայի թէ քուրդի տան, բիրում և նւիրում էին այս վանքին։ Այստեղ սրանց չէին աշխատեցնում և ոչ էլ կապում, այլ ազատ թողնում էին իրենց կամքին շրջելու, որովհետև սրւը համարուելով ոչ ոք չէր համարձակում որևէ վնաս հասցնել։ Դող հիւանդութիւնն ունեցողը գալիս այս սպիտակ գոմէշի մազերից մի քանիսը պոկում էր, տանում կրակի վրայ ձգում և ինքը՝ կունում վերան, որպէսզի սրա ազդեցութեամբ դողն անցնի։ Շատ ուխտաւորներ իրենց մատերը դնում էին գոմէշի վրայ և խնդրում, որ իրենց ուխտը կատարուի։ Համարեա ամեն մի ուխտառը պոկում էր այս գոմէշի մազերից միքանի հատ և տանում ալիւրի շտեմարանի, ցորենի հորի մէջ ձգում, որ բարաքեաթով լինի։

Եթէ այս գոմէշները ծնէին՝ բրորովին սպիտակ ձագը միենոյն պաշտաման կարժանանար, իսկ սև ձագը կանցնէր սովորական գոմէշների շարքը։ Երբ այս գոմէշները սատակէին՝ մեծ ցաւակցութեամբ թաղում էին վանքի բակում։

Եզան պաշտաման մնացորդ պիտի համարել Եզնիկ, Ցոլակ անունները, որ այժմ էլ գործածական են Վասպուրականում։

Վանի և Առճակու ծովերում լինում են հրեղէն օիեր, որոնց երբեմ կտրիճները բռնում են և հեծնում։ Արանք թեաւոր են, հարող են թոչել, լիզու ենել և գալիք չարիքը գուշակել։

Երբեմ սրանք սովորական ձիերի հետ մերձենում են, երբ ծովից գուրս են գալիս աղբիւրի ջուր խմելու. և կամ արածելու, և այս դէպքում ծնուած քուռակները նոյնպէս հրեղէն են լինում։ Այսպիսի ձիերի մասին առաւելապէս պատմում են հէքիթթների մէջ, առում են, որ կտրիճները պահում են իրենց մօտ այսպիսի ձիերի պոչերի մազից, որպէսզի երբ ցանկանան, կրակ տան, գան։ Այս ձիերը շատ բծախնդիր են լինում, եթէ տէրը նստի հաց ուտելու նախ քան իրենց կեր տալը, կամ պառկի հանգստանալու, նախքան իրենց մասին հոգալը՝ վրէժինդիր են լինում։ Նոյն կերպ են վարւում, երբ անզթաքար խփում են իրենց։

Արջ.—Մի ասորի կին իւր խորթ հարսին աալիս է վրանի մի սև կտոր և ստիպում տանել գետը և այնքան լուանալ, որ սպիտակի, կինը լուանում է, լուանում, սակայն տեսնելով որ ամեննեին չի սպիտակում՝ յուստահատում է և սկսում է լալ։ Աստուած մեղքանում է այս հարսի վրայ և սկիսրոջը արջ դարձնում։—ահա թէ որտեղից է առաջացել արջը։

Հոգոց վանքի արջի գերեզմանը.—Հոգոց վանքը կառուցանելիս մերձակայ այրում բնակուղ դները շարունակ եկել՝ շինուածը քանդել են, երբ շինողները յուսահատուել են, Տիրամայրը երևացել է նրանց և ասել, թէ մի օրում շինեցէք վանքը և օծեցէք, որպէսզի դները չկարողանան մօտենալ: Երբ վանքը շինել և օծել են, դները հալածուել փախել են, միայն մինը ոտը կոտրել է և չի կարողացել փախչել, աղաչել է, թէ իմ կեանքը ինայեցէք, ես կը ծառայեմ վանքին, նրա թռնրի մոխիրը կը տանեմ կածեմ Փրաբաթման, որ գտնուում է Սղերդի Թուլահ գիւղի տակ: Այդ կաղ դեին չեն մնասել, և այդ օրուանից մինչև այժմ Հոգոց վանքի թռնիրներում երբէք մոխիր չի մնում, նա հաւաքում, տանում, Փրաբաթման գետն է ածում:

Այս վանքի շինութեան միջոցին էլ մի արջ ինընարերաբ եկել է և սկսել վանքին ծառայել, օրական երկու անգամ անտառից փայտ բերելով: Եւ երբ սատակել է, նրան թաղել են ո. Ցովհաննէսի մատրան մօտ: Այժմ էլ ցոյց են տալիս նրա գերեզմանը և շատերն ուխտ են անում:

Եթէ արջին պատահած միջոցին՝ մարդու պէս բարեևն, վերջինս ոչ մի մնաս չի հասցնիլ:

Շոն՝—Եթէ մինի խանութիւ առջև շան գանգ թաղուած լինի՝ կարծում են թէ շատ յաճախորդ պիտի ունենայ, ուստի և անոր տան շէմու տակ շան կոտ (գանգ) կայ խորտծա դարձուածքը գործ են ածում, երբ կամենում են ասել, թէ շատ բարեկամ կամ այցելու ունի:

Եթէ շունը ոռնուում է՝ ասում են թէ տանից մինը մեռնելու է, որպէսեակ շունը տեսել է գրողին, դրա համար էլ սկսել է ոռնալի Եւ որպէսզի այդ գժբաղդութեան առաջն առնեն՝ բարոջներից մինը թարս են դարձնում:

Մեծ պասի առաջի շաբթու ուրբաթ օրը կատաղած շան է նուիրուած, տօն են պահում, որպէսզի կատաղած շներն իրենց չը կծեն:

Կատուն սուրբը է համարում և նրա սպանողը նրա մեղքից ազատուելու համար նրա մազերի թուի համեմատ պատարագ պիտի մատուցանել տայ:

Քրիստոս և Մահմէտ միմեանց զօրութիւն ցոյց տալու համար՝ որոշում են մի մի հրաշք գործել: Մահմէտ քթի մէջ երկու մուկ է պահում և Քրիստոսի առջև փանչտալով դուրս է ցայտեցնում: Քրիստոս անմիջապէս ձգում է իւր թաշկինակը՝ տաելով. Օրհնած, գնա բռնէ զանիծած, և թաշկինակը կատու է դառնում, բռնում մկներին:

Օծերն իրենց շապիկը փոխում են և մի որոշ աղբիւրից, որ միայն իրենք գիտեն, զուր են խմում և որոշ ծաղկից ուտում, որով միանգամայն նորոգւում են, և այսպիսով կարողանում են շատ երկար ապրել:

Օձի շապիկ են դնում վանեցիները իրենց ծոցերը, որպէսզի օձերը իրենց չխայթեն:

Մանը ուլունքներով օձ կամ կարիճի պատկեր են ասեղ-նագործում երեխաների գտակի կամ հագուստի վրայ, որպէսզի օձերը չխայթեն:

Եթէ ծկան գլխի խաչաձև ոսկորը պահեն գլխարկի մէջ, շատ փորձանքներից կազատում են, ուստի և երբ կամենում են զարմանք արտայատել, թէ ինչպէս մինը փորձանքից ազատուել է՝ ասում են. «Ձկան խաչ կար գլուխ»:

Կղիա կամ Ողնի չեն պահում տան մէջ՝ որպէսզի տունը չաւերռուի:

Շերամ.—Դաշտանի ժամանակ կանայք շերամատուն չեն մտնում այլապէս շերամի որթերը կը կոտորուին:

Կ Բ Ա Կ Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Ծրագ.—Ցերեկը վառուած ճրագը փչելով չեն մարում, մեղք է, այլ ձեռքի շարժումով օդի հոսանք յառաջ բերելով, այլապէս տան ճրագն էլ կը մարի:

Ննջեցեալը տանից հանելուց յետ, նոյն գիշերը նրա մեռած սենեակում ոչ ոք չի քնում և մինչև լոյս ճրագ են վառում: Գիւղերում սովորութիւն կայ, որ ազգական և բարեկամ տներից մի մի ձիթի ճրագ է ուղարկուում այս սենեակում վառելու, այնպէս որ երբեմ 40—80 ճրագ են վառում մինչև լոյս:

Հարս ու կիսի եկեղեցուց տուն վերադառնալիս՝ փեսի մայրը գլխին դրած կամ ձեռին բռնած մոմերով զարդարուած մի ափսէ, լի շաքարեղիններով ու գաթաներով, դուրս է գալիս և պարելով ընդ առաջ է դնում թագաւորին ու թագուհուն և համբուրելով նրանց, առաջնորդում հարսնացուի սենեակը:

Հարսանիքներին վառուած մաշալաներ (ջահեր) տանում են հարս ու թագուորի առաջից *):

Եթէ ճրագը յանկարծակի անցնի՝ նշան է որ այդ տանից մինը յանկարծաման է լինելու:

*) Պարսից զրադաշտական թագաւորների առաջից բռւրմերըն արծաթէ ատրուշան էին տանում. այս սովորութիւնն անցել էր նաև Հռոմի կայսրներին, Թրիստոսի Ա դարի վերջում:

Ցիմար և իմաստուն կուսանաց տօնին տիրացուներին տաս-
սը մոմ են բաժանում, և դիտում, ում մոմը որ շուտ հանգչի՝
յիմար է, ումը ուշ՝ իմաստուն:

Գիշերը, ճրագի մօտ փռնչտալը, նոյն իսկ մէկ անգամ, յա-
ջող է համարւում:

Եթէ վառարանի փայտերը կայծակտելով վառուին, և կամ
ձայն արձակին, նշան է, որ անեցիների մասին չարախօսում են:

Եթէ ճրագը պատահմամբ կայծեր ցատկեցնէ՝ նշան է թէ
ճրագի տիրոջը բամբասում են:

Կիրակմտին ճրագի վրայից ծխամուրճ չեն վառում, մեղք
համարելով այդ:

Կրակի. — Կրակի վրայ թքնելը մեղք են համարում և կար-
ծում են, որ թքնողի բերնում վէրքեր են գոյանում, այս պատ-
ճառով և պառաւ կանայք հաց կամ բաղարջ թիսելիս բերանները
կապում են, որպէսզի նոյն իսկ պատահմամբ թուքի կաթիլներ
չցայտեն կրակի վրայ:

Մննդաբերութեան միջոցին ծաղկաւելը վառում են և ծննդ-
կանին ստիպում վերայից երեք անգամ անցնիլ, որպէսզի ծնն-
դաբերութիւնը հեշտանայ:

Վախեցած երեխային բժշկելու հաւատով, նրա օրօրոցում
պառկած միջոցին, խանձարուրի վրայ բարակ բամբակից մի
խաչ են դնում և չորս ծայրերը միաժամանակ վառելուց յետ՝
շուտով վերցնում են, որ կրակը խանձարուրին չանցնի:

Տեառնընդառաջին վառուած խարոյիկի վրայով տղամարդիկ
ցատկում են, նրա բոցերով մարմնաւոր և հոգենոր ախտերից ա-
զատուելու յուսով, տղամարդիկի իրենց փէշերի ծայրը խանձում
են՝ ցաւ ու չոփից աղատ թնալու համար, կանայք իրենց ուչխուրի
ծայրն են վառում երեխայ ունենալու փափագով, աղջիկներն
ու հարսներն էլ իրենց գղեղղիրը կոչուած գործիքն այս խարոյիկից
վառուած մոմի ծուխի վրայ բռնելով մրոտում են և այդ մուրը
քաշում աշեերին, որպէսզի զօրեղանայ տեսողութիւնը. տան
տիկիններն այդ խարոյիկի մոխրից ածում են հաւանոցն, որպէսզի
հաւերը շատ ձու ածեն, տղամարդիկ խանձողները տանում
ձգում են արտերը, որ արդիւնաբեր լինին:

Տէրընտազի (տեառնընդառաջի) երեկոյեան ծնուած երեխան
շատ չար և կրակու է լինում, որովհետեւ էկրակի հետ է ծնուում:

Թունիր. — Եթէ գիւղում եկեղեցի չի զինում և կամ շատ հե-
ռու է լինում, պսակը կամ մկրտութիւնը կատարում են թոնրի
կամ բուխերիկի առջեւ:

Թոնրի վրայ, քուրսու շուրջը նստած միջոցին, երբ ոտները

կախ են անում թոնրի մէջ, զգուշանում են թոնրի շուրթերին խփելու, որպէսզի հացի թանգութիւն չյառաջանայ:

Երբ մի պանդիտի կարօտը քաշեն և ցանկանան, որ շուտ վերադառնայ, թոնրի մնուածքի ակը բանալով՝ գլուխը մօտեցնում են և կանչում. «Աղոթ, Զմրութ, այսինչին կանչէ գայ»:

Երբ թոնրի մուխը լցւում է տունը, չի քաշւում, ասում են. «Մուխ բռնէք աղ բառնանք» որպէսզի մուխը սոսկալով սպառնանքից շուտով քաշուի:

Եթէ երեխայի բերնից «թառ» (ջուր) է գնում, մայրը գըրկած բոլորովին լուռ գնում է մի այնպիսի տուն, ուր այդ երեխայի հետ գեռ ևս չի եղել, և այստեղի թոնրի ական շորով երեք անգամ սրբումէ երեխայի բերանը:

Թոնրի անունով շատ անգամ երդուում են ասելով. Էսա թորուան խէր բէարաքէթ, որ Աստծու տաճարն ի:

Ա Ր Ե Ւ Ի Պ Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Արեւ.—Մոկաց գիւղաքաղաքի «Դաշտի-թաղ» անուն տեղի հիւսիսային կողմը: բարձր ապառաժների վրայ, գտնուում են 2 հին բերդ, «Վերին և Ներքին Պէստ» անունով: Սրանցից Վերինի վրայ կայ մի մատուռ, որտեղից շատ գեղեցիկ կերպով երեսում է արեւի ծագումը: Գլխաւորապէս վարդավառին առաւելապէս ամուլ կանայք ուխտ են գնում այս մատուռը, միայն այնքան վաղ, որ արևածագից առաջ պիտի գտնուին մատրան առաջ, և արեւի ծագած միջոցին դառնալով դէպի արեւը, աղօթում են ու նրանից «կանաչ արև» զաւակ խնդրում:

Հզ բարձր այսինքն այգառղջոյն.—Արեւապաշտութեան ամենալաւ մնացրդներից մինը կարող է համարուել էզ բարեկը, որ կատարում են հարս ու փեսան պսակի հետեւեալ առաւոտը այսպէս՝ դեռ արեւը չծագած, հարսնեորների և նուագածուների, երբեմն նաև քահանայի, առաջնորդութեամբ բարձրանում են տան կտուրը և կամ մի բարձր տեղ, որտեղից շատ լաւ երեսում է արեգակի ծագումը: Այստեղից թագուհին ու թագաւորը ըըռնում են մի թաշկինակի ծայրերից և երեսները դէպի արևելք դարձրած կանգնում: Ազապները զուռնի ներդաշնակութեամբ երգում են.

Էզ (այդ) բարեւ, մայ էզ բարեւ,

Էզն արևուն տանք բարեւ,

Տայ թագաւորին շատ բարեւ,

Վահէ, Վահէ:

Այս և այլ երգեր երգելով ազակները պարում են, մինչև
որ արել ծագում է: *)

Անուններ.—Արեգ, Արեգնազան, Արփի, Արշալոյս Վերջա-
լոյս անունները, որպէս արևապաշտութեան մնացորդ, դեռ մինչև
այժմ էլ գործածական են Վասպուրականում:

Հրանտ, Հրանոյշ, Հրիկ, Հրահատ և Միհրան անունները,
որպէս հուրի և Միհր աստծու պաշտաման մնացորդ, մինչև
այժմ էլ գործածական են Վասպուրականում:

Ծննդաբերութեան միջոցին ծննդկանի երեսը դարձնում են
դէպի արևելք:

Դէպի արևելք դարձրած չեն միզում, մեղք է, այլապէս մա-
տերի եղունգների մօտ եղած կաշին կը պատառոտի:

Շ Է Մ Ք Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ի Ն Ք

Ընդհանրապէս տան շէմքը նուիրական է համարում և յա-
ճախ սրա վրայ ևս երդուում են սասելով, «Քո տան շէմքի խէր
պէրէքէթ գիտէ, որ էսպէս է»: Նորափեսան ու նորահարսը առա-
ջին անգամ թագուորի տունը մտնելիս՝ դրսի գրան առջն հաւ-
կամ գտու են մատղում, զլուիը դրան շէմքին դնելով և արիւնից
խաչածե քսելով դրան կամրակալ քարին:

Եւ երբ նոյն հարսն ու թագուորն ուզում են անցնել սենեակի
շէմքով, սրանց ոտների տակ երկու ափսէ են դնում, որը թա-
գուորը կոտրատելով ներս է մտնում:—Սա ևս մի նուիրաբերու-
թիւն է շէմքին, որ կատարում է, որպէսպի հարսի մուտքը բարի
լինի այդ տան համար:

Շէմքի վրայ կանգնած միջոցին բարեկել և կամ սակարգել
չարագուշակ են համարում:

Երբ մի տանից նշանաւոր կամ չափազանց վատ մարդիկ
յառաջանան՝ ասում են. «Ին տան շէմք էնպէս կը խանէ»:

Երբ մի տուն շատ յաճախորդներ ու բարեկամներ ունենայ,
ասում են. «Անոնց շէմքին տակ շան կօտ (գանգ) կայ խորուկ
(թաղուած):

Նորահարսը առաջին անգամ կեսրանց տուն մտնելիս՝ նախ
աջ ոտքն է դնում շէմքի վրայ, որպէս զի նրա ոտնամուտը բարի
լինի:

*) Մանրամասնութիւնը տեսնել Հարսանիքի նկարագրու-
թեան մէջ. Ազգ. Հանդէս ՀՀ գ. Արտատպութիւն՝ Վասպու-
րական. Ազգագրութիւն. Ա. պրակ. երես 43—45.

Եթէ նորահարսը կեսրանց տանն սկսում է լղարիկ՝ ասում են. «Շէմք չեկաւ վրան», իսկ եթէ գիրանում է՝ ասում են. «Շէմքն էկաւ վրան»:

Երեխայի կաթնատամերը թաղում են տան շէմքի տակ, ասելով. Առ քեզ շան ատամ, տու ձիկ գառու ատամ:

Տունը չարբերից և չար աչբից ազատ պահելու համար շէմքի վերև չոր փուշ, գիտոր, հին կօշիկ, կոտոշ և այլ իրեր են կախում:

Երբ ցանկանում են բաց դուռը գոցել տալ, «գոցէ», «փակէ» չեն ասում, այլ «շինէ», որովհետեւ դուռը «գոցուիլը», կամ «փակուիլը» տան աւերուելու նշան է համարւում, և իբր անէծք գործ է ածեռում «գուռադ գոցուի» դարձուածքը:

Եկեղեցու դրան վերաբերմամբ էլ նոյն գոցուած բառը չեն գործածում, այլ «խաչուած» է, ասում են:

Ն Ա Խ Ն Ի Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ի Ն Ք

Սպիրաբար աւագ որդու վրայ է ընկնում հօր և նախնիների գերեզմաններն օրհնել տալու պարտականութիւնը. Նա է թէ տարելիցին և թէ այլ ժամանակ պատարագ մատուցանել, գերեզմաններն օրհնել և հոգու հաց տալիս, զոհելով մի քանի ոչխար կամ եղ. Աղջիկներն ընդհանրապէս ազատ են այս պարտականութիւնից, ուստի և ծնողներն աւելի ուրախ են լինում, երբ արու զաւակ են ունենում, որովհետեւ իրենց գերեզմանները պահող պահապահ, օրհնել տուող են ունենում:

Ամէն մի արհեստաւոր շարաթ երեկոները խունկ է ծխում իւր արհեստի փիրի (նախահօր) հոգու փրկութեան համար:

Շուշանի գերեզմանը.—Շուշանց գիւղում Սենեքերիմ թագաւորի դուստր և այդ գիւղի հիմնադրուհի Շուշանի գերեզմանը ուխտատեղի է համարւում և գիւղացիներն ամեն շարաթ երեկոյ մոմ են վառում նրա խաչքարի առջև և խունկ ծխում *):

Կլոր դար. —Վան քաղաքի հարաւային կողմը, Այգեստանեայց մէջ կայ մի կլոր բլուր, որ կոչւում է Կլոր-դար, և որա անունով էլ սրա շրջակայթը կոչւում են Կլոր-դարի թաղ. Սա ըստ երեսթին կուսպաշտական մի շատ լաւ դամբան է, միանգամայն արժանի պեղման. Սրա գագաթին կայ մի հինաւուրց մատու, որ կոչւում է Թուի մանուկ**): Բլրի ստորոտում գտշնուում է Թուրքերի գերեզմանատունը:

*) Տես պատկերը նշանաւոր վանքերի բաժնում:

**) Թուիս-մանուկ կոչւուած ուխտատեղիները հաւանականուին նախահայրերի գերեզմաններ են:

Ամէն կիրակնամտին վանեցի հայ կանայք ուխտ են գնում այդ ուխտատեղին, մոմ վառում, խունկ ծխում, և ձէթ ածում նրա կանթեղի մէջ:

Պատմում են, թէ երբ կանթեղի ձէթը պակասում է, մատուի շուրջը լոյս է փայլում, և այս տեսնելով վանեցիներն շտապում են ձէթ տանելու:

Ցանախ աղօթողների բերանից լւում են հետևեալ խօսքերը. «Ով թուխ (սե) մօրու թուխ մանուկ, դու իմ մանուկը սիվտակ մօրու անսես, արև շատութիւն տուր իմ կտրճին՝ իր խօր տան ճրագ էնի, գայ քեզ հա ճրագլու պիրի, քո կիրակնամուտ վառ պահի»:

Ձերիմ կտրող գերեզմաններ.— Ա. Զրուանդանց գիւղում հայկական հին գերեզմանատանը կայ մի գերեզմանաքար, որի վրայ շրջանաձև մի փոս է փորուած, որի մի ծայրը յանկում է գերեզմանաքարի եղթին: Ձերմ ունեցողները բերում ջուր են ածում այս շրջանաձև փոսի մէջ և ծայրից խմում, որ առողջանան:

Բ. Կտուց անապատում Շխիթ-թէկ քրդից նահատակուած Սիմէօն եպիսկոպոսի գերեզմանաքարի վրայ մի փոքրիկ փոս կայ, ուր ջերմ ունեցողները ջուր են ածում և խմում, որպէսզի ջերմը կտրի:

Հայկ նահապէտ.— Հայկ թէլի վրայ պատերազմի գնալիս իւր ծանր իրերը թողել է այնտեղ, ուր յետոյ հիմնուել և մինչև այժմ կանգնած է Հայկայ վանքը, ինքը անցել գնացել է Հայոց-Զոր, մտել է Աստուածաշին գիւղը, ուր բոլոր բնակիչներն աստուածներ շինելով էին զրադում և սրանց բոլորին կոսապաշտութիւնից աստուածապաշտութեան է դարձրել: Պատերազմի միջոցին Հայկ իւր նետը մինել է թէլի կուրծքը, որը շնչառառ ընկել է գետին: Այս ժամանակ սրա թոռը, որ մօտը կանգնած է եղել, հարցըրել է թէ թէնչ եղաւ: «Ո՞ն, գառնիկ, խարսանց զիս», պատասխանել է թէլը և այս պատճառով էլ այդ տեղը կոչուել է «Խարսանց»: Առանց նետը թէլի կրծքից հանելու, տարել են թաղելու, մի տեղ վայր են դրել, և նետը հանել: այս ժամանակ արել թէլի կրծքին խփելով շող է տուել հանդիպակաց պատի վրայ և Հայկի թոռը այս տեսնելով ասել է պապին: «Ճես շող» և այս պատճառով այստեղի գիւղը կոչուել է Տըշող: Այստեղից թէլի մարմինը տարել թաղել են այնտեղը, որ մինչև այժմ էլ կոչում է թէլու:

Այժմ էլ վարդապահին վանեցիները թաղ թաղ բանակ են կազմում և պարսատիկներով ու նետ ու աղեղներով միմեանց հետ կուռում են իբրև խաղ:

Հայկ կամ Խէք են կոչում վանեցիները Որիոն համաստեղութիւնը և պատմում են, թէ Հայկ նահապետն է աստղի փոխարկուած:

Վանեցիները «Կշիռ» կոչուած աստղերն անուանում են «Խէքեր»:

Երբ «Բազումք» աստղերից յետոյ հորիզոնի վրայ բարձրանում են «Կշիռ» աստղերը, վանեցիներն ասում են. «Խէքեր էլան» երբ մտնում են դէպի արևմուտք, ասում են. «Խէքեր մտան». միաժամանակ նաև ասում են, Հայկ երեք լաճ ունէր, երեք աղջիկ, որ ասոնք են, ցոյց տալով խէքերը *).

Ո Գ Ի Ն Ե Ր Ի Պ Ա Շ Տ Ա Մ Ո Ւ Ն Ք

Առնակ.—Վանում մայրերն իրենց չար երեխաներին «Առնակայ շուն», «Առնակային երեխայ» են անուանում, առանց կարենալու բացատրել այդ խօսքերի նշանակութիւնը**).

Գրող.՝Հռոմմ-մամիկը Վանում պատմում էր թէ իւր քեռին և քեռաղէն (պապը) Էօթնական տարի գրողներին ման են ածել. Այս ոգիները մի մի սպիտակ տոպրակ անց էին կացնում սրանց գլխներին, որով նրանք աներեռոյթ էին դառնում: Ապա հանում էին իրենց մօտի դաւթարը և կարդում թէ մւմ անունն է գրած, քեռին ու քեռաղէն առաջնորդում էին դրանց այդ մարդկանց տները և ցոյց տալիս անձնաւորութիւնները, գրողները իրենց ձեռի ձիպոտով խփում էին սրանց, որով նշան էր զոյանում, յետոյ հոգեառ հրեշտակը գալիս էր, այս նշանով գտնում սրանց և հոգին առնում:

Գրողի տարած, գրողի դաւթար գրուես, գրող քետանի, գրող քետ խեղղի, գրմատ տեսար, գրող, մախ քեռ արև էլնի, քիյ տանի, —մինչև այժմ էլ գործ են ածւում իրը անկծք:

Փոլժիկ կամ Շուտիկ, մի արագընթաց ոգի է, որ նոյնացնում են գրող աստծու հետ, որովհետև յաճախ ցգրող տանի քեզ» ասելու փոխարէն «Շուտիկ տանի քեզ» են ասում:

Մաղրաբար նոր ոտք ելնող երեխաներին էլ փութիկ են կոչում:

Զաշանք. — Սրանք աներեռոյթ, բարի ոգիներ են, մարդկային կերպարանքով. նրանք մեղ տեսնում են, իսկ մենք նրանց չենք տեսնում: Արանց ծագման մասին պատմւում է հետեւալը.

*) Աղուանեան, Լումայ. 1898, թ. գ. 289.

**) Պարզ է, որ սա մնացորդ է մեր նախնեաց Առնակ հոգեառ չար ողուն:

Քրիստոս երեխաներից տասանորդ էր հաւաքում։ Մի կին որ տաս որդի ունիր, մի քանիսը թաքցնում է, որ Քրիստոսին տասանորդ չըվճարէ։ Քրիստոս գալիս է այս կնոջ մօտ, սա ցոյց է տալիս իւր մի քանի երեխաները։ Քրիստոս հարցնում է թէ էլ որդիք չունի։ Զէ, պատասխանում է կինը։ Քրիստոս ոչինչ չի ասում, ու հեռանում է։ Կինը զնում բաց է անում. պահարանը, ուր թաքցրել էր երեխաներին, սակայն ոչ ոքի այնտեղ չի գըտնում. բոլորը դարձած էին չաշանք։

Չորեկմուտ, ուրբաթմուտ և կիրակմուտ։ Սրանք ոգիներ են, որ հոգանաւորում են այն ծննդականներին, որոնք երեքշարթի, հինգշարթի և շաբաթ երեկոները կիրակի են բռնել և առագաստ չեն մտել։

Պատմում են թէ մի կին բաց է արել իւր դրկցի դուռը և տեսել է որ տանտիկինը չոքել է, մի անծանօթ կին մտել է մի թէը՝ մի ուրիշը միւս թեր, մի երրորդն էլ պատրաստութիւններ է տեսնում։ Զշանաշերով այդ կանանց՝ կինը ծածկել է դուռը և սպասել, որ դուրս գան, տեսնի ովքեր են, Երբ բաւական ուշացել են, նորից բաց է արել դուռը և տեսել է, որ տանտիկինը ծննդկան պառկած է և երեխան խանձարուրած դրուած է կողքին, նախկին կանայքն էլ չեն երեւում։ Մտել է ներս և հարցրել, թէ ժվերը էին մի թիշ առաջ այնտեղ եղած կանայք։ Ծննդկանը պատասխանել է, թէ Չորեկմուտ, Ուրբաթմուտ և Կիրակմուտ ոգիներն էին, որոնք օգնեցին իւր ծննդարերութեանը։

Սովորաբար չորեկմուտ, ուրբաթմուտ և կիրակմուտ երեկոները ճրագը մինչև լոյս վառ են թողնում։ Այս կիրակմուտները աւելի ամուր են պահում, քան կիրակին. ուստի և յաճախ ասում են. կիրակին, աչ կիրակմտին։

Կիրակմուտք երեկոները չեն լողանում, մեղք համարելով այդ. իսկ եթէ ստիպուած են լինում, տաշտի մէջ կայծնան կամ պողպատէ մի այլ իր են ձգում, որպէսզի սրանց ազդեցութեամբ չարքերը հալածուին։

Տան տէօվլաթ. —Ամէն տուն ունենում է մի բարերար ոգի, որ յայտնի է տան տէօվլաթ անունով։ Սրանք սովորաբար լինում են օձի, կամ հիւրի-փերիի և կամ արհեստաւոր մարդու կերպարանքով։ Սրանք բնակում են տան պատի մէջ, կարի տակ, նկուղում և ժամանակ առ ժամանակ երեւում անեցիներին կամ լսելի անում իրենց ձայնը կամ իրենց արհեստից յառաջացած թխթխոցը։ Տնեցիները մեծ յարգանքով են վերաբերում դէպի այս ոգիները, հաւատացած լինելով, որ իրենց տան բարօրութեան պատճառը սրանք են, Օձի կիրպարանք ունեցող ոգիներն

իսկական օձերից որոշուում են նրանով, որ երբ կամենում են սրանց սպանել, սրանք հանում են իրենց լեզուները՝ և աչաւորի շարժումներ անում:

Ճրագ կպոցից յետոյ, մանաւանդ կիրակնամտին, տունը չեն աւելում, այլապէս տան դովլէթը կը խռովի կերթայ, իսկ եթէ ստիպուած են աւելելու՝ աւելի ծայըը փոքր ինչ վառում են ճրագի վրայ, որպէսզի տան դովլէթը ներէ և չխռովի գնայ:

Փուռղիք կամ՝ Պուպուշիկ, միանգամայն համապատասխանում է ուրիշ գաւառների շվոտ չար ոգունու Սրա վերաբերութեամբ էլ փետրուարի վերջին անում են այն, ինչ որ անում են շվոտի վերաբերմամբ, այսինքն՝ հալածում են տներից այսպէս.

Տանուտէրը գլուխը այծի մորթի փաթաթած, վերցնում է մի ձեռը մի ուրիշ մորթի, միւսը՝ մի մանգաղ՝ պտտում է տան բոլոր սենեակները և մանգաղով խփում պատերին՝ ասելով. «Փուռղիք, դուքս, Փուռղիք՝ դուռա, և այսպէս երբ համում է փողոցի գուռը, աւելացնում է. «Փուռղիք, գնա զողան, պաղ աղրիւներ, կանաչ դաշտեր, քիւրդի տներ», և անմիջապէս դուռը փակում, բայց որպէսզի փուռղիքը տան հերթիկից նորից ներս չմտնէ՝ նախապէս փայտի երկու ձողեր խաչած զնում է հերթիկի վրայ, որպէսզի փուռղիքը խաչի զօրութիւնից հալածուի:

Կառակուրա (մզաւանջ).—Ոմանց ասելով սրանք հակայ մարդիկ են, ուրիշների ասելով թանձր ստուեր, որ երեեմն ընկնում են պառկող մարդկանց վերմակի վրայ և սաստիկ ճնշում, երեեմն էլ մկան կամ կատուի կերպարանքով մտնում են անկողնի մէջ և սարսափեցնում պառկողին. երեեմն էլ պառկողի գլխի տակից բարձը բաշում, քցում են մի կողմէ:

Կէօնէատապ.—Հայերը հաւատում են, թէ իրենց մեծ չարիք նիւթող մահմեղականները մեռնելուց և թաղուելուց յետոյ չեն հանգստանում գերեզմանում, այլ գիշերները կատուի կամ շան կերպարանքով դուրս են գալիք ու թափառում, գնում իրենց տները, և լուսաբացին վերադառնում գերեզմանն. Իրենց տնեցիներին ևս սաստիկ անախորժ լինելով սրանց այս այցելութիւնը, դիմում են միակ միջոցին—կանչում են մի քրիստոնեայի, որ բռնում է այս կատուն և կամ շունը, վեզը զնում այդ տան շէմքի վրայ և տապարով կտրում. Երբ լուսանում է՝ տեսնում են ոչ թէ կատուի կամ շան դիակ, այլ վախճանուած մարդու ամրող մարմինը, որը նորից տանում թաղում են:

Մարդագէլ.—Ս. Բարդուղիմէսոսի վանքի գիւղից մի ազքատ մարդ, Յակօի տղայ Յովսէփը, գնացել էր Հաւթըւան, ուր այդ միջոցին մարդագէլներ էին երեացել և շատ կոտորածներ էին ա-

նում Սա շատ դռներ է բաղիւել հիւրնկալութիւն հայցելով, սակայն հչ ոք չէ ընդունել, երկիւղ կրելով թէ մի գուցէ նրան էլ մարդագէլը տանի և իրենք պատասխանատու մնան: Բոլորից մերժուած Յովսէփը քուչուրել է փողոցի մի անկիւնում: Կէս գիշերին տեսել է մի մարդագէլ զայլի մարմնով, մի աչքանի, մի ձեռը բահի, միւսը փայտատի նման: Յովսէփը զարդանդել է, կարծելով թէ իսկոյն իրեն պիտի լափէ, սակայն մարդագէլը ասել է նրան: Ես հիմայ քեզ կուտէի, սակայն բո տէրը (Ս. Բարդուղիմէոս, որովհետեւ նա սրա գիւղից էր) շատ զօրաւոր է, չեմ կարող քեզ մօտենալ: Յետոյ թռել, մտել է մի տուն, երկու երեխայ հանել օրորցներից և տարել:

Երբ առաւօտը Յովսէփը պատմել է Հաւթըւանցիներին այս պատահածը, նրանք շուտով եկել են ս. Բարդուղիմէոսի վանքը և ս. առաքեալի Աջը տարել, թափոր կատարել, բոլոր մարդագէլերն անհետացել են: Շարունակ երկիւղ կրելով մարդագէլերից Հաւթըւանցիք մինչև հիմայ էլ պահում են, ս. Աջը և չեմ վերադառնում:

ԽՍԱՂԻԿ.—Սրանք շատ մանր չար ոգիներ են, որոնք մարդկանց յօրանջելս կարող են բերանը մտնել, եթէ որ չեն շտապում խաչակնքուել: Խոկ փանկտալս այս՝ արդէն կուլ զնացած խողիկները գուրս են նետում, ուստի և ներկայ եղողները բարեմաղթում են՝ թէ «մէք էլնի»:

Երբ այս խողիկները մտնում են մարդկանց փորը՝ նրանց խենթացնում են, և տրամադրում շարունակ իրենք իրենց խօսիլու, ուստի և ժողովուրդը միմեանց հետ զուարձացող, ասող խօսողների վերաբերմամբ ասում է. դարձել են իմ խողիկ:

ԹՄԱՂԻ.—Ժողովուրդը երեսակայում է գորտանման մի չար ոգի, որ յդի կանանց արգանդը մտնելով թունաւորում է նրանց սաղմը, որի պատճառով և նորածինը կամ մեռած է ծնւռում և կամ չափազանց սակաւակեաց է լինում: Այս չար ոգին թպըզ է կոչում և նրանից զարնուած կինը՝ թպղոտ: Շատ անգամ ճահճների միջից գորտեր բռնելով թալիսմաններ են շինում և յդի կանանց մօտ պահում, որպէսզի թըպըզները չմերձենան նրանց:

ՍԵՂԱՆԱՅՈՒ.—Վանի լճի նաւաստիները լճի վրայ տեղի ունեցող փոքրիկ թաթառները սեղանայս են կոչում, և կարծում են, որ մի չար ոգի է, որ գալիս է նաւերը խորտակելու, ուստի և անմիջապէս առագասանները իջեցնում են և սըբերին օգնութեան կոչում:

Սատանի խարսնիս.—Երբ երկրի վրայ փոքրիկ թաթառներ են տեղի ունենում, վանեցիք սատանի խարսնիս են կոչում:

և կարծում են, թէ սատանաների մի խումբ վիշապ են քաջում վերև, որպէսզի յետոյ այդ բարձրութիւնից վայր ձգեն և սպանեն:

Վիշապ.—Եթէ օճը հարիւր տարուայ ընթացքում մարդի երես չտեսնի, այնքան կը մեծանայ, որ վիշապ կը դառնայ, մինչդեռ մարդ տեսնելիս հալւում, մաշտամ է:

Նարեկայ գիւղի ուս Աւեաիս ծերունին պատմում էր, թէ նոյն վանքի հարաւային լերան վրայ մի ահազին վիշապ կայ, որ երբեմն նովիւներին երևում է, վերջիններս անմիջապէս փախչում մօտակայ այրերի թփերի մէջ թաք են կենում. Վիշապն անցնելիս այնպէս Փըշշոց է տիրում, որ սար, քար գողում է, սրա պոչի շարժուելոց ամպի նման փոշի է բարձրանում: Ինչ կենդանի պատահի, մարդ, անասուն, վիշապն ամբողջովին կուլ է տալիս և յետոյ գնում փորը խփում ժայռերի, մեծ մեծ քարերի, որ կուլ տուածը կարողանայ մարսել:

Վիշապ—Թաթար: Վանի լճի մէջ սարսափելի մեծութեան վիշապներ կան: Երբ սրանցից մինը հազար տարեկան է զառնում, հրեշտակները վերև են քաշում նրան, տանում մօտեցնում արեգակին, որի տաքութիւնից նա այրւում է և մոխիր դարձած թափում երկրի վրայ, առաջ այդ ժամանակն է, որ այնպիսի թանձր մառախուզ է տիրում, որ մի քանի քայլի վրայ մարդիկ իրար չեն տեսնում:

Օծերի թագաւորը իւր գլխին կըսում է մի լուսատու ուլնիկ, որ գիշերները լոյս է սփռում: Երբ նա գալիս է աղբիւր ջուր իմելու, պատահել է, որ յետեկց խփել են գլխին և ուլնիկը, որ օձառւնիկ է կոչւում, ձգել են ջուրը, յետոյ որոնել գտել Այս օձառւնիկն ամեն տեսակ հիւանդութիւնների դեղ է համարւում. և երբ ոչխարներն օձահար են լինում, այս ուլնիկը ջրի մէջ են ձգում, և այդ ջուրը խմացնում ոչխարներին ու նրանց վրայ սրսկում, որ առողջանան:

